№ 83 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 20

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 20 № 83

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գովում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողաչափն 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 բ., տասն ամսվանը՝ 9 բ., ինն ամսվանը՝ 8 բ., 8 ամսվանը՝ 7 բ., եօթ և վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ. և մի ամսվանը՝ 1 բուբլի։ Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծարներ ուղարկելիս, պէտք է դիտել հետեւեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Վշտագին սրտով այրի Նոյեմզար Օհանէսեան, որդիք Վահան, Վաղարշակ, Խաչէն և Ամբրոսիոս Գրիգորեան Սրբոյշիկեանները ընտանիքներով յայտարարում են իրանց ազգականներին և ծանօթներին, որ առաջիկայ կիրակի, ապրիլի 23-ին, առաւօտեան ժամը 10-ին, Կարս քաղաքում ծնական եկեղեցում կը մատուցվի պատարագ, իսկ պատարագից յետոյ ժամը 12-ին հոգեհանգիստ՝ առաջնի թանկագին ամուսնու, և վերջինների երջանկայիշատակ հօր՝

ԳՐԻԳՈՐ ԱՂԱՋԱՆԵԱՆ ՍԲՐՈՅՇԻԿԵԱՆՑԻ

(հ. ու.) հոգու համար։ 1—2

Բրաբիոն, Ստեփան, Յովհաննէս և Մկրտիչ Քիւրքճեանները յայտարարում են իրանց ազգականներին և բարեկամներին, որ առաջնի անմոռանալի որդու, վերջինների վաղամեռիկ եղբօր՝

ՍԻՄԷՕՆ ՔԻԻՐՔՃԵԱՆԻ

մահվան տարեդարձի առիթով տեղի պիտի ունենայ ամսոյ 21-ին, ուրբաթ առաւօտ, Կուկիայի կաթոլիկների Պողոս-Պետրոս եկեղեցում պատարագ և հոգեհանգիստ։ Պատարագը կը սկսվի ժամի 10-ին, իսկ հոգեհանգիստը 11-ին։ 1—1

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտնում է իր գիտութիւն ընդհանուրի, որ Թիֆլիսի գաւառի քաղաքային ընտրողների համաժողովը—Թիֆլիսի Նահանգապետի հրամանի համաձայն մշակված է մայիսի 5-ին, իսկ ընտրողական մասնաժողովի նիստը՝ Թիֆլիսի քաղաքային ընտրողական ժողովի ընտրողների ընտրութիւնների առիթով,—նշանակված է մայիսի 10-ին։ Ընտրութիւնների կատարման տեղի մասին առանձին կը հրատարակվի։

Ընտրողների ցուցակների թերութեան և անարդարութեան առիթով տրվելիք յայտարարութիւնների և բողոքների ժամանակամիջոցը—Թիֆլիս քաղաքի ընտրողների ցուցակների համար լրանում է այս ապրիլի 21-ին, իսկ Թիֆլիսի գաւառի քաղաքային ընտրողների ցուցակների համար—ապրիլի 20-ին։

1—1

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԱՏՐՈՆ

Տեղական Դրամատիկ. Ընկերութեան Վարչութիւնը

պէտք է պահի եկող սեզոնում

(1906—1907)

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ. ԽՈՒՄԲ

և հրաւիրում է ցանկացողներին (դերասան, ռեժիսոր, սցենարիստ և յուշարար) իրանց պայմաններով դիմել ընկերութեան նախագահին, պ. Գ. Զուբարին, այս հասցէով՝

Нахичевань на/Дону присяжному поверенному Георгій Ивановичу Чубарову 21 л. д. № 8.

(հ. հ. ղ.) (առ.) 2—4

ОБЯЗАТЕЛЬНОЕ ПОСТАНОВЛЕНІЕ

для города Тифлиса, изданное, на основаніи ст. 19 прилож. къ ст. 23 общ. губ. учр., т. II св. зак., изд. 1892 года, Временнымъ Генералъ-Губернаторомъ г. Тифлиса, Тифлисскаго и Борчалинскаго уѣздовъ.

—

ОБЪ АДРЕСНОМЪ СТОЛѢ, УЧРЕЖДЕННОНЪ ПРИ УПРАВЛЕНІИ ТИФЛИССКАГО ПОЛИЦІЙМЕЙСТЕРА.

§ 1. Въ цѣляхъ охраненія общественнаго спокойствія и порядка, а равно для удобства жителей, на владѣльцевъ недвижимыхъ имѣній гор. Тифлиса, или ихъ отвѣтственныхъ управляющихъ, возлагаются нижеслѣдующія обязанности:

1) Содержателямъ гостинницъ и меблированныхъ комнатъ, или арендаторамъ таковыхъ, вмѣняется въ обязанность объявлять въ мѣстныя участковыя полицейскія управленія о каждомъ постояльцѣ, прибывшемъ въ заведеніе или выбывшемъ изъ него, въ теченіе 12 часовъ съ момента прибытія или выбытія, съ представленіемъ документа, удостовѣряющаго личность, для прописки таковаго въ участкѣ;

2) Домовладѣльцамъ, или отвѣтственнымъ управляющимъ, гдѣ таковые есть, а въ казенныхъ и общественныхъ зданіяхъ—лицамъ, завѣдывающимъ паспортною частью, вмѣняется въ обязанность объявлять въ мѣстныя участковыя полицейскія управленія о каждомъ прибывшемъ или выбывшемъ въ теченіе 24 часовъ послѣ прибытія или выбытія;

3) Свѣдѣнія эти доставляются въ участковыя управленія или центральный адресный столъ на установленныхъ адресныхъ бланкахъ въ двухъ экземплярахъ; на каждомъ бланкѣ должна быть подпись Полицеймейстера.

4) Всѣ лица, занимающія въ указанныхъ въ п. 2 зданіяхъ отдѣльныя квартиры (квартирохозяева), обязаны извѣщать домовладѣльца, или отвѣтственнаго управляющаго, или завѣдывающаго паспортною частью, о каждомъ лицѣ, допущенномъ на жительство въ квартиру, или выбывшемъ изъ нея, въ теченіе 18 часовъ послѣ прибытія или выбытія;

5) На содержателяхъ гостинницъ, меблированныхъ комнатъ, домовладѣльцахъ или отвѣтственныхъ управляющихъ, а въ казенныхъ и общественныхъ зданіяхъ—на завѣдывающихъ паспортною частью, лежитъ обязанность вести во всей исправности установленныя для записки проживающихъ книги, за подписью на каждой Полицеймейстера;

6) Въ виду имѣвшихъ мѣсто случаевъ, когда злонамѣренныя лица, дабы избавиться отъ необходимости предъявлять домохозяину документъ, удостовѣряющій личность, назывались чиновниками или офицерами и заявляли, что таковой находится въ мѣстѣ ихъ службы, домовладѣльцамъ и квартиро-нанимателямъ вмѣняется въ обязанность требовать отъ проживающихъ у нихъ офицеровъ и чиновникъ удостовѣреній подлежащаго начальства о самоличности;

7) Для пріобрѣтенія установленныхъ бланковъ, книгъ и заносенія въ таковыя жильцовъ дается десятидневный срокъ со дня опубликованія Тифлисскимъ Полиціймейстеромъ объ изготовленіи книгъ и бланковъ и указанныя имъ, гдѣ таковые можно пріобрѣтать.

§ 2. Въ этихъ же цѣляхъ и для регистраціи населенія города Тифлиса, учреждается при Управленіи Полицеймейстера адресный столъ, о времени открытія котораго послѣднымъ будетъ оповѣщено населеію дополнительно.

§ 3. Свѣдѣнія о проживающихъ въ городѣ, прибывающихъ въ Тифлисъ и переходящихъ изъ одного дома въ другой, доставляются въ участковыя управленія или центральный адресный столъ на листкахъ бѣлаго цвѣта, свѣдѣнія о выбывающихъ изъ Тифлиса, умершихъ, поступившихъ въ больницы и заключенныхъ подъ стражу,—на листкахъ синяго цвѣта.

§ 4. При составленіи адресныхъ листковъ, соблюдаются слѣдующія правила:

а) всѣ обыватели, безъ различія пола, возраста и состоянія, вносятся въ отдѣльные для каждаго лица адресные листки;

б) жены, не исключая проживающихъ вмѣстѣ съ мужьями, вносятся въ листки не только по именамъ, но и по фамиліямъ;

в) монашествующія лица православнаго и армянскаго духовенства вносятся въ листки не только по именамъ, но и по фамиліямъ;

г) лица женскаго пола, вступившія въ бракъ, вносятся въ листки синяго цвѣта, въ рубрикѣ коихъ «куда выбылъ» пишется: вступила въ бракъ съ такимъ то и выбыла туда то (въ томъ случаѣ, если лицо выбываетъ), если же лицо, по вступленіи въ бракъ. осталось на той же самой квартирѣ, гдѣ проживало раньше, то, одновременно съ синимъ, вносится и въ бѣлый листокъ, прописанное уже по фамиліи мужа;

д) о лицахъ, взятыхъ подъ стражу, выбывшихъ за болѣзьню въ больницу и объ умершихъ, дѣлается въ листкѣ отмѣтка: подъ стражу туда то, въ больницу такую то, умеръ тогда то и погребенъ на такомъ то кладбищѣ, и на оборотъ: о прибывающихъ изъ подъ стражи, изъ больницы послѣ лѣченія, дѣлается отмѣтка: изъ подъ стражи оттуда то, изъ больницы такой то:

е) на лицъ, имѣющихъ по двѣ фамиліи, должны представляться адресные листки въ 4-хъ экземплярахъ, съ указаніемъ обѣихъ фамилій (напримѣръ: «Петровъ» онъ же «Ивановъ» на двухъ листкахъ. а на слѣдующихъ двухъ листкахъ: «Ивановъ» онъ же «Петровъ»);

ж) книги для записи проживающихъ должны вестись аккуратно, безъ помарокъ, съ разборчиво написанными чернилами свѣдѣніями, въ противномъ случаѣ онѣ должны замѣняться новыми.

§ 5. Не вносятся въ адресные листки: нижніе воинскіе чины, служащіе въ частныхъ и другихъ командахъ, живущіе при таковыхъ.

§ 6. Въ адресные листки свѣдѣнія вносятся въ подлежащія графы, сообразно изложенныхъ въ самыхъ графахъ требованіямъ.

§ 7. Адресные листки должны составляться четко, ясно и вполнѣ разборчиво.

§ 8. Настоящее обязательное постановленіе вступаетъ въ законную силу со дня опубликованія объ открытіи адреснаго стола; лица, до коихъ относится настоящее обязательное постановленіе, въ случаѣ нарушенія таковаго, подвергаются въ административномъ порядкѣ взысканію штрафа до трехъ тысячъ рублей или аресту до трехъ мѣсяцевъ.

§ 9. Домовладѣльцы или квартирохозяева, въ помѣщеніи коихъ обнаружены будутъ лица, разыскиваемыя судебной или полицейской властью, принадлежащія къ партіямъ революціоннымъ и террористическимъ, сверхъ взысканія, указаннаго въ предыдущемъ §, будутъ высылаться изъ предѣловъ генералъ-губернаторства.

§ 10. На наложеніе взысканій за невыполненіе обязательныхъ постановленій уполномачивается и. об. Тифлисскаго Полицеймейстера, съ предоставленіемъ ему права налагать штрафъ до 500 рублей и арестъ до 2-хъ мѣсяцевъ. Во всѣхъ же случаяхъ, когда, по обстоятельствамъ дѣла, потребуется наложеніе болѣе серьезнаго взысканія, вмѣняется ему въ обязанность немедленно входить съ представленіемъ ко мнѣ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լսեցէք և այս. Վերջին տեղեկութիւններ. Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրութիւնը. Պետական Դումայի շուրջը. Մամուլ. Բժշկի Մ. Օհանեանի արհեստանոցը Գանձակում. Ինչպէս պէտք է մշակել սամանադրութիւնը. Բոյկոտը առիթով. Պոզոլեան գիւղացիների քաղաքական ծրագիրը. Թատրոն և երաժշտութիւն. Հաղցերի մի Փունջ. Նամակ Սղնախից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԼՍԵՑԷՔ ԵՒ ԱՅՍ

—

«Մշակի» № 81-ի առաջնորդող յօդուածը, որ վերաբերում է կիրակի օրվայ ծխական ընտրութիւններին, շօշափել էր էական մի հարց և ցոյց էր տրուել, որ ընտրողական ցուցակ կազմողները խախտում ճանապարհի վրա են։

«Ցառաջ» լրագիրը վերցրել է ցուցակ կազմողներին իր հովանաւորութեան տակ և պաշտպանում է նրանց։

Ի՞նչ էինք մենք ասում մեր յօդուածում։

Մենք պահանջ էինք դնում որ ընտրութիւնները լինէին իրրև գիտակցական հասարակական մի գործ։ Ուստի ասում էինք թէ՝

կամ վերջնական ընտրելիների, այսինքն հոգաբարձուների կազմը պէտք է յայտնի լինի ընտրողին,

կամ դպրոցական ծրագիրը պէտք է պարզված լինի որոշ կերպով ընտրողների առաջ

եւ կամ պատգամաւորների անունները պէտք է ծանօթ լինեն ծխական ընտրողի համար։

Իսկ շրջապատված լինել մի շարք անորոշութիւններով—դա հասարակական տեսակէտով անհնարելի և նպատակայարմար չէ։

Մենք արձանագրել էինք այն իրականութիւնը, որ տուել էին մեզ ապրիլի 16-ին ընտրողական ժողովները։

II

Իսկ ի՞նչ է անում «Ցառաջը»։

Նա վերցրել է մեր յօդուածից մի կտոր, որտեղ շօշափված է մեր վերև յիշած պայմանների միայն երկրորդը ուրիշ խօսքերով, սկսում է յոխորտալ և փորձում է սրախօսութիւններ անել արտօնեալների, տիտղոսաւորների, մօնոպոլիստների վերաբերութեամբ և պաշտպանել գործակատարին, բանւորին, արհեստաւորին։

Իբր թէ մենք պաշտպան ենք առաջնիներին, իսկ ինքը պաշտպան է վերջիններին։

Մենք լուրջ հարց ենք դնում ընտրողական գործի մասին, իսկ «Ցառաջ»-ը մեր առաջ շարում է գործին չը վերաբերող անհեթեթութիւններ։

Մենք ենք եղել և երէկ և այսօր արհեստաւորի, գիւղացու և աշխատաւորի շահերի և տենչանքների արտայայտողը և հէնց այդ բոլորի բարոյական օգտի համար ցանկանում ենք, որ նրանց անունով հանդէս եկողները լաւ կշռեն իրանց արածները և ընտրողական սուրբ գործին վերաբերվեն այն բարեխղճութեամբ, որ պահանջում է գործի բարոյական մասը։

Չէ կարելի «նպատակը արդարացնում է միջոցներ» սկզբունքով ղեկավարվել և տեղի անտեղի շարել թղթի վրա ամեն բան, ինչ որ գրիչը գրում է հլու կերպով։

III

Արդարև, ի՞նչ առնչութիւն կայ մեր դրած պահանջների և հետեւեալ խօսքերի մէջ, որ գրում է «Ցառաջը»։

Եւ զանազան զրպարտութիւններով, պառաւական բամբասանքներով, որ տարածվում են այդ «անայտների» մասին զանազան խաւարամիտների կողմից, նրանց դէմ վարվող ագիտացիայով, որի միջոցին շատերը ոտք առան ընկած մեղադրում են նրանց «անաստուածութեան», «ազգուրաց» և «եկեղեցակործան» միտումների մէջ։ Այդ խղճուկ ծուցներով կարելի չը պէտք է լինի կասեցնել ժողովրդի յաղթական գնացքը։

Ինչու համար է գրված այս բոլորը։

Սրանք ֆանտազիաներ են, որոնք, ի հարկէ, ոչ մի կապ չունեն մեր դրած պահանջների հետ և առաջ են բերված ապատրութիւն գործելու համար։

Բայց այդպիսի խաղեր «Մշակի» վերաբերմամբ չեն աջողվել անցեալում և չեն աջողվի ապագայում։ Իսկ մենք կարող ենք յայտնել, որ շատ առիթներ ունենք արձանագրելու թէ ինչպէս «Մշակի» հին հակառակորդները մինչև այժմ իրանց դիրքերը ամուր պահել են «Մշակի» վերաբերմամբ և շատ քնքոյշ են այն մարդկանց հետ, որոնք աքսում են աւելի ձախակողմեան երեսյ, քան իրապէս «Մշակն» է եղել մեր կեանքի խնդիրներում։

IV

Մի բացատրութիւն։

Մենք այս տարի չենք մասնակցել պատգամաւորական ընտրութիւնների վերաբերեալ նախապատրաստական գործողութիւններին և ցուցակներ չենք մշակել։

Եւ դիմելով ընտրողներին մենք մեր յօդուածներում միայն ընդհանուր ցուցումներ արինք մի քանի հիմնական սկզբունքների մասին, որոնց պէտք է աչքի առաջ ունենան ընտրողները։

Պէտք է յայտնենք և այն, որ մենք հրապարակի վրա չէինք նկատում այնպիսի ոյժեր և հակառակորդներ, որոնց դէմ պարտաւոր և ստիպված զգայինք մեզ լուրջ պատրաստվելու և դիմադրելու։

Ամեն մի անձն և ամեն մի խումբ, որոնք հանդէս կը գային պաշտպանելու ժողովրդական շահերը, լայն հասարակական սկզբունքները, կրթական բարեփոխութեան հարցերը և կը նպաստէին ընտրելու արժանաւոր հոգաբարձուների—նրանք անկասկած, մեր համակրութիւնը միայն կը ստանային։

V

Եւ եթէ դուք, իբրև ժողովրդասիրական խմբեր, հանդէս էք գալիս ձեր ցուցակներով և ծրագիրներով, մի մոռանաք, որ ընտրողական գործն էլ հասարակական գործունէութեան փոքրաքարերից մէկն է և դուք պէտք է գիտենաք, որ ժողովրդի մէջ գիտակցական և քննադատական ոգին սկսում է զարգանալ և հաշիւ կը պահանջէ իւրաքանչիւր գործողից նրա գործունէութեան եղանակի վերաբերութեամբ։

Թող մամուլի անկեղծ խօսքը չը վիրաւորէ ոչ ոքի և դրդէ մարդկանց ուղղելու իրանց սխալները։

Մենք չէինք ցանկանայ, որ ընտրողական գործի մէջ մեր երիտասարդական առաջին շարքերի մէջ սխալներ կատարվէին և ժողովուրդը հիասթափվէր իր գործողների վերաբերութեամբ։

Ա. Թալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Գանձակ, 18 ապրիլի

Թոյլար, Ղարագաղու և Սարով գիւղերի օգնութեան գործը դժուարութիւնների է հանդիպում։

Այդ գիւղերի ընակիչները առ այժմ չեն կարող վերադառնալ իրանց գիւղերը, որովհետև բոլոր ցանքերը և այգիները փչացված են։

Քաղաքի հողերին կպած կան եկեղեցական հողեր, որոնք շատ յարմար են նրանց յատկացնելու համար, բայց նախ և առաջ հարկաւոր է որոշել նրի քանակութիւնը և իրաւունքները։ Ամբողջ հարցը եկել կանգ է առել այժմ այն բանի վրա, թէ արդեօք շատ նրբ կը տան թէ չէ, որպէս զի ըստ այնմ կարելի լինի նախագիծ կազմել հայտատիկներ ցանելու և ուրիշ բոյսեր մշակելու համար—բայց դժբախտաբար ինժեներ-գիւղաչափը գնացել է Նուխի։ Նրան սպասում ենք այս երկու օրերը։

—

Բարանա, (Ղազախի գաւառ) ապրիլի 16-ին

Այսօր Կողբ, Բարանա, Ղալաչա, Դրվէգ, Դոստուլու, Կոթի, Ղօշղոթան, Բաղանիս, Ոսկեպար և Զուլհանք գիւղերի լիազօրները հաւաքվելով Բարանա՝ ժողով կազմեցին Յովհաննէս քահ. Տէր-Մաչատրեանցի նախագահութեամբ և ընտրեցին Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրելուն պատգամաւոր բժշկապետ պ. Աղէքսանդր Միքայէլեան Յակոբեանցին և կանդիդատ պ. Արշակ Տէր-Մաչատրեանցին։

Գաւառական և գաւառամասական հայթուրքական խորհրդակցութեան համար ընտրվեցին մեր գիւղերի կողմից անդամներ։

Քամարլի, Ղայմախլուի և ուրիշ գիւղերի անասնապահները սկսեցին քոչը։

Մելքիսեդեկ քահանայ

—

Դերբէնդ, ապրիլի 13-ին

Ապրիլի 13-ին Մուշկիւրի յայտնի աւազակային խումբը, որը 30 հոգուց է բաղկացած, բռնում է ինժեներ Ուսպէնսկուն իր ուսանող որդու հետ, որոնք գնացել էին որսի։ Կալուածը գտնվում է Դերբէնդից 50 վերստ հեռաւորութեան վրա։ Բռնելով Ուսպէնսկուն՝ հրամայում են որ երկու օրվայ ժամանակամիջոցում բերի 30,000 բուբլի։ Իսկ մինչև փողը տալը, ուսանող որդուն պատանդ են պահում իրանց մօտ և պահվիրում են ոչ ոքի բան չասել, թէ չէ որդուն կը սպանեն։ Ուսպէնսկին գալիս է քաղաք ու անմիջապէս պատմում է ոստիկանապետին, որը առանց ժամանակ կորցնելու գնում է դէպքի տեղը, վերցնելով հետը 50 կազակներ։ Ասում են, որ ինժէներ Ուսպէնսկին հեռագրել է Շուրա, նահանգապետին, կոմս Վորոնցով-Դաշկովին ու Վիտէին։ Մինչև այսօր ոչ մի տեղեկութիւն դեռ չը կայ։ Կարծում են, որ ուսանող որդուն սպանած կը լինեն։

Կ. Պապովեան

—

Բալահանի, ապրիլի 16-ին

Ամսոյս 14-ին, գիշերվայ մօտ ժամի 11-ին, մի քանի անայտ չարագործներ մտնում են Մանթաշեանի Ուսպենսկի կոչված նաւթահանքը գողութիւն անելու համար։ Իսկոյն այդ նկատելով՝ գիշերվայ շրջիկ պահապանները ուզում են առանց ընդհարման տեղիք տալու հեռացնել նրան, սակայն չէ աջողվում այդ, ուստի սկսվում է երկու կողմից էլ հրացանաձգութիւն։ Մերոնք արձակում են օդի մէջ, որպէս զի գործը առանց հետևանքի վերջանայ, իսկ նրանք ուղղակի կրակում են մերոնց վրա, որից թեթև վիրաւորվում է մերոնցից մէկի թեւը, իսկ չարագործները անվնաս անհետանում են մութութեան մէջ։ Իսկոյն հանում է ոստիկանութիւնը, բայց արդէն ուշ է լինում։ Այդ դէպքից յետոյ նշանակում են մի քանի պահապան զինուորներ, որոնք գիշերները հսկում են։

—

Շուլավէր, ապրիլի 18-ին

Հայերի վանքերը մեր դրացի թուրքերից առնելը և հայերին վերադարձնելը ճիշտ դարձրել է «շահի գեալդի», մինչև հիմա էլ ձգձգվում է։ Մենք համոզված էինք, թէ գնդապետ Զօլոտարեւովը մեր գաւառը գալով՝ պատերազմական դրութիւն յայտարարված այս խիստ օրերին՝ անշուշտ բաւարարութիւն է տալու անմեղ ճանաչված հայ ժողովրդի զրկանքներին. բայց յուսախաբութիւն։ Մի անգամ երեք օր ժամանակամիջոց տուեց թուրքերին՝ հաւաքելու և վերադարձնելու հայերի վանքերը. անցան քանի քանի երեք օրեր, թուրքերը լուռ են։ Յետոյ 15 օր միջոց նշանակվեց. անցաւ այդ էլ, դարձեալ ոչ մի հետևանք, դարձեալ ձայն ծպտուն չը կայ։ Ի՞նչ է նշանակում այս. Նորից խաղ խաղալ հայի պահանջների, հայի զգացմունքների հետ, թէ՞ մի այլ սոսկալի դաւ են ուզում ապագայում նիւթել այսպիսի ձգձգումներով։

Խռովութեան պատճառ եղող բէգերն ու ագալարները դարձեալ գործի մէջ քթները ներս են խոթում և նրանք մի որոշ չափով կարծես ազդեցութիւն են ունեցել։ Գնդապետը և գաւառապետը վանքերը պահանջում են խնդրելու և աղաչելու եղանակով, դրա համար էլ, թուրքերը տեսնելով, որ ոչ մի խիստ միջոց, ոչ մի ստիպողութիւն չէ գործ դրվում իրանց դէմ այդ մասին, աւելի երես, թէ առած՝ դարձեալ մնում են մերժող, բացասական դիրքի մէջ։

Գաւառապետը Սարալու և Ղօշաքիլիսա գիւղերի թուրք բնակիչներին պատուիրել է, որ գնան Թիֆլիս Անանեանին և Դօլուխանեանին խնդրեն՝ յետ բաշխելու վճռված 5000 բուբլի Ղարմէն, նրանց քօլերից—անտառներից կտրած փայտի համար։ Սակայն դրանով չէ որաւելի համարձակութիւն կը ստանան և աւելի յաւակնութիւն կունենան առաջ գնալու իրանց վայրագ գործողութիւնների մէջ, երբ իրանց անպատիժ կը զգան, երբ օրէնքի թուլութիւնը կը տեսնեն։ Հաստատ իմացայ, Անանեանցը բաշխելու համաձայնութիւն է տուել թուրքերին, իսկ Դօլուխանեանը պնդում է իր պահանջը ստանալ։ Այսքան երկար ու ձիգ դատարկներ ի՞նչ և հարց բարձրացնելուց յետոյ, մեր գաւառապետը կարողացաւ թուրքերից միայն մի քանի թուման պոկել շուլավէրցի Տէր-Պողոսեան եղ-

բայքների վնասների փոխարինման համար։ Իսկ հայ կալուածատէրերի միլիոնաւոր վնասները ովքեր պէտք է տան և երբ. կարելի է, ինչպէս ժողովուրդն է ասում էշի գատկին... Այս բաներին դիմանալու համար երկաթէ ջղեր են հարկաւոր և գոմէշի համբերութիւն։

Վաչագան

—

Ինչպէս Գանձակից հաղորդում են, «Весенній Потокъ» լրագրին, Փոխարքան հրամայել է 10,000 ր. տալ Դիւլպալի գիւղի թուրք բնակիչներին, որոնք հայերի յարձակումից վնասվել են։

ԹԻՖԼԻՍԻ ԳԵՆԵՐԱԼ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

I

1) Վերջին ժամանակներս Թիֆլիս քաղաքում կատարվող մի քանի մահափորձերի պատճառով, որը ուղղված են եղել Թիֆլիսի էլէքտրաքարշի այն ծառայողների դէմ, որոնք արդէք են հանդիսացել յունվարի 9-ի համար պատրաստվող գործադուլին և բարեկեղծորէն կատարելով իրանց պաշտօնավարութիւնը, առանց ուշադրութիւն դարձնելու սպառնալիքներին, ստիպեցին բանել էլէքտրաքարշը, իմ ստացած տեղեկութիւնները այժմ ասիթ են տալիս կարծելու, որ յիշեալ մահափորձերը հետևանք են էլէքտրաքարշի մի քանի գործադուլ անող բանուորների դրդումների, այդ պատճառով յայտարարում են ի գիտութիւն ամենքի, որ այսուհետև յիշեալ ծառայողներից որ և է մէկի սպառնալիքի կամ վիրաւորութեան ամեն մի դէպքի համար, կենսաթոշակ կամ նպաստ տալուց բացի, որը նշանակված կը լինի վնասվողին կամ իր ընտանիքին էլէքտրաքարշի դիրեկցիայի կողմից, ես էլ իմ կողմից կորոշում մի յայտնի խոշոր գումար, որը և կը ստացվի այդ ձեռնարկութեան բոլոր ծառայողներից հէնց առաջին ոռճիկը բաժանելու ժամանակ, համաձայն իւրաքանչիւրի ըստացած ոռճկի, և կը գործադրվի ի նպաստ վնասվածի կամ իր ընտանիքի։

II

1905 թ-ի դեկտեմբերի 16-ին Թիֆլիսի քաղաքի ընակիչների համար գեներալ-լէյտենանտ Մարտայի հրատարակած պարտադիր որոշումների 15 կէտը լրացնելու և փոփոխելու ենթարկելու համար, յայտարարվում է ի գիտութիւն ամենքի, որ աւտոմոբիլներով և վիշապներով շրջագայելը քաղաքից դուրս, Թիֆլիսի և Բօրչալուի գաւառներում, այսուհետև ևս թոյլատրում եմ։

Բաղաքի շրջանի մէջ վիշապներով գնալ չի կարելի, սանել միայն կարելի է, իսկ աւտոմոբիլների վրա նստած անցնել թոյլատրվում է բոլորովին դանդաղ քայլերով։

Ստորագրեց ժամանակաւոր գեներալ-նահանգապետ գեներալ-մայոր Տիմոֆէյէվ։

16 ապրիլի 1906 թ.

Թիֆլիս

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Դէրբէնդ, ապրիլի 15-ին

Ապրիլի 11-ից քաղաքային ինքնավարութեան ատեանում ու մի քանի աչքի ընկնող հիմարկութիւններում հանդէս է գրված մասնաժողովի կազմած Դէրբէնդի ընտրողական ցուցակը։ Դէրբէնդը ունի 17—18 հազար ընակիչ, որից $^2/_3$ թուրքեր են, իսկ մնացածը ռուս, հայ և հրեայ. բայց և այնպէս ընտրողների թիւը հասնում է մօտ 4000 հոգու, իսկ այն մարդիկ, որոնց անունները չեն մտցրված ընտրողական ցուցակի մէջ, պէտք է բողոքեն մասնաժողովին մինչև ընտրութեան օրը, որպէս զի այնպիսիներն էլ, որոնք օգտվում են ընտրողական իրաւունքներով, մտցնվեն ցուցակի մէջ։ Դէրբէնդից ու երեք մօտակայ գիւղայ, Դայթաղ—Թաքասրանու, Սամարի շրջաններից պէտք է ընտրվեն ընդամենը երկու թեկնածու, որոնք գնալով Թեմիր-խան-Շուրա, ուր պէտք է հաւաքվեն ամբողջ Դաղըստանի ու Զաքաթալայի գաւառի թեկնածուները, որոնց թիւը 33 էր կը ընտրեն երկու պատգամաւոր Պետական Դումայի համար։

Մուսուլման տարրը, որը գերազանցում է քանակութեամբ, թեկնածու ընտրելու գործումն էլ գերազանցողը նա է, բայց ցաւալին այն է, որ այդ ազգութեան մեծամասնութիւնը անգրագէտներից է բաղկացած ու շատ քչերին են հետաքրքրում ընտրութիւնները, ուստի օգտվելով հանգամանքից մի քանի ինտելիգենտ թուրքեր ամեն կերպ աշխատում են համոզել «մուսուլման կարգաշներին», առանց ծանօթացնելու նրանց զանազան կուսակցութիւնների հետ ընտրել այնպիսի մարդկանց, որոնք համապատասխան չեն։ Ի՞նչին վերագրել այդպիսի վարմունքը, մենք այդ չգիտենք, բայց և այնպէս խորհուրդ կը տանք ինտելիգենտ թուրքերին, որոնք գոռում են թէ թուրք հասարակութիւնը ոչ մի կուսակցութեան չէ պատկանում, ու կարճ ժամանակամիջոցում չէ կարելի ծանօթացնել զանազան կուսակցութեան պրոգրամների հետ, գէթ համոզեն, որ նրանք հետևեն միայն ազգութիւններին, որոնց արդէն իրանց թեկնածուներն են դրել։ Միայն ազգութեան կողմից, քաղաքումս յամառ տարածված լուրերին նայած, ցանկանում են ընտրել քաղաքագլուխ Կ. Հէյդարովին և քաղաքային հիւանդանոցի բժիշկ Մ. Աստուածատուրեանցին (երկուսն էլ պատկանում են սոցիալ-դեմոկրատական.)։ Դէրբէնդցիք շատ լաւ են ճանաչում պ. Հէյդարովին, որը իր 6 ամեայ գործունէութեամբ ցոյց տուից, թէ որքան քաղաքին պիտանի է, և որի շնորհիւ քաղաքը շատ ու շատ առաջադիմել է։ Ընտրութիւնները կատարվելու են մայիսի 5-ին, հասարակաց ժողովարանի դահլիճումը։

—

Ախալցխա, ապրիլի 16-ին

Պետական Դումայի պատգամաւորների ընտրութիւնների մասնակցողների անունները արդէն ցուցակագրված են և պատրաստ։ Մօտ օրերումս էլ բաժանվեցին ընտրող քաղաքացիներին հրաւիրագրեր և առանձին ընտրողական թերթիկներ իրանց ցանկացած անձի անունը գրելու։ Քաղաքացիների ընտրութեան ժողովը նշանակված է այս ամսի 27-ին։

ՄԱՄՈՒԼ

—

Բուենոսայիսի ազնուականութեան լիազօր իշխան Վ. Ս. Միքելաձէն, որ գնացել էր Պետերբուրգ ժամանակելու Պետական խորհրդանդամների ընտրութեան, արտասանել է ընտրողական ժողովում մի ճառ Վրաստանի ներկայացուցչութեան մասին Պետական Խորհրդում։

Իշխանը յայտնում է, որ ինքն ստիպված էր այդ ճառը արտասանելու, որովհետև ժողովի անդամներից ոմանք հարց էին տուել, թէ ծայրային երկիրները ինչ են մտածում «Ռուսաստանի միութեան» մասին։ Ինչպէս գիտենք, ռուսաց հասարակութեան մի մասը և բիւրօկրատական կովկասցիների դրած պահանջի մէջ—տալու իրանց աւտոնոմիա—տեսնում են ձգտումն անջատման։ Բացի դրանից Անդրկովկասին միայն մի տեղ է տրված Պետական Խորհրդի մէջ։

«Ես չեմ կարող—ասել է իշխանը—գտնված համարել մեր երկիրը, երբ նրան միայն մի տեղ են յատկացնում Պետական Խորհրդի մէջ։ Անդրկովկասը բաղկացած է 6 նահանգներից, երկու շրջանից և երկու շրջանակից, 6 միլիոն բնակիչներով։ Ֆիզիքական, կենցաղական, տնտեսական, սոցիալական և քրոնական պայմանների բազմազանութիւնը ուղղակի պարտք էր դնում օրէնսդրի վրա տալ մեր երկրին (Անդրկովկասին) աւելի մեծ ներկայացուցչութիւն Պետական Խորհրդում։ Բայց ներկայ դէպքում ևս, ինչպէս և միշտ, մեզ անտես արին և անտես արին ամենաների անարդար եղանակով։

Ապա աւելի զարգացնելով այդ միտքը, իշխան Միքելաձէն խօսեց նաև Վրաստանին հասցրած անարդարութեան և վիրաւորանքների մասին։

«Մեր երկիրը ընդհանրապէս և Վրաստանը մասնաւորապէս ոչնչով չեն արժանացել այդպիսի վերաբերմունքի։ Վրաստանի մասուցած ծառայութիւնները մոռացված են նրանց կողմից, ով պէտք է ամենից շատ յիշէր։ Վրաստանը, իբրև անկախ թագաւորութիւն, գոյութիւն ունեցաւ մօտ 15 դար։ Այդ երկար ժամանակաշրջանում նա, մի ձեռքին խաչ, միւս ձեռքին՝ թուր՝ կռուում էր ասիական աշխարհակալների անգին այժերի դէմ—Զինգիզխանի, Թամերլանի, Թիւրք—սելջուկների, օսմանցիների և պարսիկների հրոսակների դէմ, որոնք փոթորկի նման անցան Վրաստանի հողից։ Կանգնած լինելով Ասիայի և Եւրոպայի շէջերին, Վրաստանը հանդիսացաւ քրիստոնէական կուլտուրայի յամառ պաշտպան և արքունի պահապան։ Ոչ Ռուսաստանը, ոչ առհասարակ քաղաքակիրթ աշխարհը, իրաւունք չունեն այդ մոռանալ։ Անտրորդութեան և խաղաղութեան ծոցերումս Վրաստանը եռանդուն կերպով զբաղվում էր ներքին կուլտուրական աշխատութիւնով։ Եկեղեցական ճարտարապետութեան բազմաթիւ և հոյակապ կոթողները, ցրված ամբողջ Վրաստանում, մինչև այսօր ևս գիտնականների զարմացման առարկան են կազմում։ Նրա եկեղեցական և աշխարհիկ գրականութիւնը պատուաւոր տեղ է բռնում։ Բայց որքան էլ զօրեղ լինէր վրացի ժողովրդի հոգեոր և բարոյական հզորութիւնը, բազմադարեան կռիւը բոլոր ճակատների վրա տարայրեց նրան ֆիզիքապէս։ Վիրաւոր՝ նա ամենամեծնչիւ անձնատուր չեղաւ իր մօտ հարևանների Թիւրքիայի և Պարսկաստանի թեւդրաբիւնների։ վճռելով վերջ դնել իր անկախ քաղաքական գոյութեան, նա ինքնայօժարապէս անձնատուր եղաւ իր դաւանակից ռուս ժողովրդին։ Այդ հանդամանքը մեծ նշանակութիւն ունեցաւ Ռուսաստանի համաշխարհային քաղաքականութեան մասին։ Վրաստանը, կամաւորապէս ընդունելով Ռուսաստանի հպատակութիւնը, դրանով տուեց վերջինին յենակէտ իր տիրապետութիւնը Կովկասում տարածելու համար, որը, իր հերթին, նոյնպէս դարձաւ յենակէտ միջին-ասիական երկրներին նուաճման և պետութեան սահմանները մինչև Կուշկա, Հիմալայի սոսրոտները տարածելու համար։ Ոչ Մեծն-Պետրոս, ոչ նրա նախորդները չէին կարող լուծել այդ մեծ հարցը։ Նրա լուծումը հնարաւոր դարձաւ միայն երբ Վրաստանը ընդունեց Ռուսաստանի հպատակութիւնը։ Մթթէ դա մեծ պատմական դէպք չէ։ Մթթէ դա վրաց ազգի կողմից մատուցած ծառայութիւն չէ։ Զը պէտք է մոռանալ անցեալը, ով մոռանում է անցեալը, նրան պատժում է ապագան։

«Մեզ հարցնում են, թէ ի՞նչ ենք մտածում Ռուսաստանի միութեան մասին։ Պետութեան միութիւնը դա մեր քաղաքական հաւատի հանդանակի առաջին անդամն է։ Ռուսաստանի միութիւնն և անբաժանելիութիւնը երբէք չի թաւալի, եթէ ծայրային երկիրների և նրանց մէջ բնակող ազգութիւնների համար ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնք հնարաւորութիւն տան նրանց հոգեոր և տնտեսական ոյժերին լիակատար, լայն, բազմակողմանի և ազատ զարգանալը։ Ներկայ կազմը հէնց նրա համար է անյարմար և վնասակար, որ ոմանք վայելում են հարատաւ զաւակների, իսկ ոմանք խորթ զաւակների իրաւունքներ։ Ապահովագրէք մեզ ամենքիս համար ազատ քաղաքացու իրաւունքները և ամեն մի երկիրդ պետութեան ամբողջութեան համար ինքն իրան կանհետանայ։

Իշխան Միքելաձէի ասածները ամենայն արդարութեամբ կարելի է ասել և հայերի ու նրանց Ռուսաստանին մատուցած ծառայութիւնների վերաբերմամբ։

*

Որքան մօտենում է ապրիլի 28-ը, այն է Դումայի բացման օրը, այնքան մեծ հետաքրքրութեամբ ռուսաց հասարակական կարծիքը պահանջում է որ գործից հեռանան մեր քաղաքականութեան այժմեան ղեկավարները՝ Վիտէ-Դուրնովո-Ակիմովի մենիսարութիւնը։

Այդ պահանջը «Страна» լրագիրը հետևեալ կերպով է բացատրում.

«Ինչի համար են պահանջում այդ հեռացումը։ Նրա համար, որ այդ մարդիկ իրանց պսեխական կազմով պէտքական են միայն բէպրեսիաների և զանգային աշխատութիւնների համար, և օրգանապէս ընդունակ չեն այնպիսի աշխատութեան համար, որ առաջ է բերել ժամանակից բօպէն—ստեղծագործական, կուլտուրական, մարդկային աշխատութեան համար։

«Եւ ճշմարիտ, ինչպէս կարող է անկել ազատութիւնը նա, ով համարում է մարդին վայրի գազան, որին պէտք է զսպել, կամ անհանգստութեան դէպքում, հրացանագրի անել։

ԲԺՇԿՈՒՀԻ Մ. ՕՀԱՆԵՍԱՆԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ ԳԱՆՁԱԿՈՒՄ

—

Գանձակում նորերս բացված ջուլֆակութեան արհեստանոցի գործը, կարելի է հաստատապէս ասել, սպասածից աւելի աջողութիւն ունեցաւ։

Բժշկուհի տիկին Մարգարիտ Օհանեսանի ձեռք առած եռանդուն աշխատանքի շնորհիւ, կարճ ժամանակամիջոցում կազմակերպվեց ջուլֆակութեան ընկերութիւնը։ Իւրաքանչիւրի փայը գնահատվեց հինգական ռուբլի, միաժամանակ ձեռնհաս տիկիններից և օրիորդներից ընտրվեցին վարչութեան անդամներ, գանձապահ և այլն։ Բաժանորդները ամենայն սիրով վճարեցին իրանց փայագիրը, ի հարկէ մեծամասնութիւնը ոչ թէ ապագայում մեծ օգուտներ ստանալու յուսով, այլ այդ վերին աստիճանի օգտաւէտ և նպատակայարմար արհեստը մեր հայերի մէջ տարածելու տենչանքով։ Ներկայումս հարիւր մի ամիս է ինչ արհեստանոցը բացված է և թէ բազմաթիւ ինքնաուսներ կան արհեստաց մանելու, սակայն հազիւ քսան չափ աշակերտուհիների կարելի եղաւ ընտրվել, որոնք կանոնաւոր յաճախում են արհեստանոց և այս կարճ ժամանակամիջոցում զարմանալի արագութեամբ նրանք սկսել են գանգան կտորներ գործել։ Բացի աշակերտուհիներից կան սովորողների թւում մի քանի ինտելիգենտ տիկիններ և օրիորդներ, որոնք սովորելուց յետոյ արհեստանոցում կը սահմանվեն (վարպետուհու) վարժուհու պաշտօներ։

Հմուտ աշակերտուհիները արհեստը կարող են սովորել 4—5 ամսվայ ժամանակամիջոցում. աւարտողներին կը փոխարինեն նորերը։ Իսկ աւարտածների համար դիւրին է բոլորովին չնչին գնով ձեռք բերել գործող մեքենան, որ բացի սանրելից, մեացեալ բոլոր մասերը տեղական առաղձագործի շինելիք են։ Պէտք է ասել, որ մինչև այսօր մեր օրիորդների և տիկինների ձեռքով պատրաստած ձեռագործները ժողովրդի մեծամասնութեան համար ապերդ շռայլութիւն էին համարվում։ Ջուլֆակութեան ձեռագործը բոլորովին չէ կարելի համեմատել մինչև օրս եղած ձեռագործների հետ, որոնք ժողովրդին բացի նիւթական վնասներ և շռայլ ծախսեր պատճառելուց, ուրիշ օգուտ չեն տուել։

Ինչպէս արհեստանոցի կառավարչի տիկնոջ, նոյնպէս վարչութեան բոլոր անդամուհիների ցանկութիւնն է այս օգտաւէտ և կարեոր արհեստը տարածելու նաև շրջակայ գիւղերում, ուր վարպետուհիների համար մի քանի անյարմարութեան և խոչընդոտի առաջն առնելու համար կառավարչուհին մտադիր է պատրաստելու նաև վարպետներ նրանց գաւառները ուղարկելու համար։

Արհեստանոցում բանող տիկինները և օրիորդները ամենայարմար միջոցում ընտրացել են արհեստին և ներկայումս պատրաստում են զանազան ձևի կտորներ. երբ մի քանի կտորներ պատրաստ կը լինեն և կանոքը սովորաց խաղաղ ընթացքի մէջ կը մտնի—պատրաստված կտորները ի ցոյց կը դրվեն հասարակութեան և միաժամանակ կը կատարվի արհեստանոցի օրէնսդրութեան հանդէսը։

Ինչպէս տեղեկացանք, արհեստանոցի յարգելի կառավարչուհու միակ և գլխաւոր ցանկութիւնն է տեղական պահանջներին և կարիքներին համապատասխանող կտորներ պատրաստելու, առ հասարակ այնպիսի կտորներ, որոնք գործածական են թէ քաղաքներում և թէ գիւղերում։

Երբ արհեստանոցի մի քանի թերութիւնները կը վերացվեն, մենք դարձեալ կը վերադառնանք այս շնորհաբեր և օգտաւէտ հիմարկութեանը։ Առ այժմ այսքանը պէտք է շեշտենք, որ արհեստանոցը գլուխ բերելու համար մեծ ջանք և աշխատանք են գործ դրել ինչպէս հիմնադիր բժշկուհի Օհանեան, նոյնպէս տեղացի մի քանի տիկիններ և օրիորդներ, որոնք շատ սերտ կերպով կապած են գործին և ամեն կերպ աշխատում են օգնելու արհեստանոցի աջողութեան։ Մաղթենք, որ այդ եռանդը յարատև լինի։

Աւ. Սահակեանց

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՄՇԱԿԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

VI

Ուղղակի ընտրողական իրաւունք

Նախորդ գլուխներում մենք պարզեցինք, թէ ինչ է նշանակում ընդհանուր և հաւասար ընտրողական իրաւունքը. այժմ մենք պէտք է խօսենք ընտրողական իրաւունքի ուղղակի ձևի մասին, որ նոյնպէս ամենամեծ կուսակցութիւնների լոզունգն է դարձել։

Ընտրողական իրաւունքի ուղղակի ձևը այն է, որ քաղաքացիները պատգամաւորներին ընտրում են ուղղակի այն ներկայացուցչական հիմարկութեան համար, որը օրէնքներ հրատարակելու լիազօր իրաւունք ունի։ Իսկ երբ քաղաքացիներին իրաւունք է տրվում միայն նախ ընտրողներ կամ լիազօրներ ընտրել և ապա այս լիազօրներն է, որ ընտրում են իսկական պատգամաւորներին, այդ ժամանակ ընտրողական ձևը դառնում է անուղղակի, երկաստիճան։

Ճիշդ այդ ձևով են Ռուսաստանում կատարվում ընտրութիւնները Պետական Դումայի համար և այդ ձևով էլ պէտք է շուտով կատարվեն մեզանում—Կովկասում։ Կասկած չը կայ, որ անուղղակի ընտրութիւնների ձևը ամենից ինչ է հասցնում գլխաւորապէս աշխատաւոր ժողովրդին։ Հէնց նրա համար էլ հարկ են ընտրողական իրաւունք ունեցող քաղաքացիներին մի շարք մարդերի միջից անցկացնելու եղանակը, որպէս զի թոյլ չը տան ժողովրդի խեղճ դասակարգից ընտրվածներին պարլամենտ մտնել։

Եւ յիրաւի, լիազօրները պէտք է ամբողջ ընտրողական շրջանից մի առանձին տեղ հաւաքվեն, վերջնական ընտրութիւններ կատարելու համար։ Աղքատ մարդուն միշտ դժուար է կանխաւ իր ժամանակը դատաւորել. քիչ լիազօր կընտրեն, իսկ յետոյ՝ համեցէք ընտրողական ժողովի գնալ այնպիսի մի ժամանակ, երբ ձիշտ աշխատելու օրեր կը լինեն կամ թէ անկարելի կը լինի տունը թողնել հեռանալ։ Այդ պատճառով էլ աշխատաւոր ժողովուրդը, թէ քաղաքային և թէ գիւղական, պէտք է միշտ աշխատէ լիազօրների մէջ չընկնել և, այդպիսով, ընտրողների մեծ մասը, ունևոր մարդկանցից կը լինի կազմված ընտրութիւններն էլ ուրեմն ամբողջապէս հարուստների ձեռքը կընկնեն։

Այդ դեռ բաւական չէ։ Ամեն շրջանում ընտրողների թիւը շատ մեծ է. սովորաբար լինում է 25—30 հազար, երբեմն էլ աւելի։ Ոչ մի կառավարութիւն և ոչ մի հարուստ չէ կարող հաճոյանալ բոլոր ընտրողներին, կաշառել նրանց և կամ որևէ այլ միջոցներով ստիպել, որ բոլորն էլ քուէ տան կառավարութեան կամ հարուստների թեկնածուին։ Բայց խնդիրը բոլորովին փոխվում է, երբ ընտրութիւնները կախված են մի որևէ 200—300 լիազօր-ընտրողներից։ Այդ դէպքում կարելի է նրանցից իւրաքանչիւրի վրա ազդել. տէրտէրին լաւ ծուխ կը խոստանան, կալուածատիրոջը ձեռնտու պայմաններով փոխառութիւն, վաճառականին կառավարչական կապալ, հարուստ գիւղացուն՝ իր ազգատ դրացիներից պարտքերը կեղեքելու համար ոստիկանական օգնութիւն, իսկ անդիտակից բանուորին էլ, եթէ մի այդպիսին սպրդել է լիազօրների մէջ, մի տարուկ պաշտօն։ Այդպիսով, մէկ էլ տեսար, լիազօրների կէսից աւելին մեզրոտվել է ուրեմն, փոխանակ իրանց ազատ խղճով ընտրութիւն կատարելու, ընտրում են մատնանիշ արված «յարմար»ը մարդուն։ Ի՞նչ կարող ես անել. փոքր ու մեծերով բնակչութեան մէջ մարդիկ միշտ իրարու խաթր պահում են։

Այդ պատճառով էլ, ամեն տեղ, ուր գոյութիւն ունեն երկաստիճան անուղղակի ընտրութիւններ, բանուորներին համարեա թէ անկարելի է լինում իրանց թեկնածուներին անցկացնել պատգամաւորական ժողով։ Վերցնենք հէնց նոյն Գերմանիան։ Մենք արդէն տեսանք, որ այնտեղ սոցիալ-դեմոկրատներին տուել են աւելի քան 3 միլիոն ձայն և որ, չը նայելով ընտրողական իրաւունքի անհաւասարութեանը, նրանք պարլամէնտ (ռեյխստագ) ուղարկում են 81 պատգամաւոր։ Բայց Գերմանիան բաժանվում է ասանձին պետութիւն—նահանգների։ Այդ նահանգների գործերը վարելու համար էլ գոյութիւն ունեն ընտրողական առանձին հիմարկութիւններ, որ կոչվում են Լանդտագ։ Պրուսիայում Լանդտագի ընտրութիւնները կատարվում են երկաստիճան եղանակով, և ահա նախանցեալ տարի գերմանական բանուորները չը կարողացան Լանդտագի մէջ ոչ մի մարդ իրանց թեկնածուներից ընտրել։ Նրանք շատ լիազօրներ ընտրեցին, բայց ընտրողական սիստեմը այնպէս խորամանկ ձևով է կազմված, որ նրանց լիազօրները ամեն տեղ փոքրամասնութեան մէջ էին մնում։

Ահա թէ ինչպիսի մեծ նշանակութիւն ունի բանուորների համար ուղղակի ձայնատուութեան իրաւունքը։ Զը պէտք է բոլորովին ենթարկվել այն բոլոր ասէ-կոսէներին, թէ իբր Ռուսաստանի ընդարձակ և բազմամարդ լինելու պատճառով, ուղղակի ընտրողական իրաւունքը «անյարմար» է, թէ իբր, պատգաւորների շատութեան պատճառով, դժուար է ընտրութիւնները կատարել, թէ իբր երկաստիճան ընտրութիւնները, օգտակար են այն տեսակէտով, որ նրանք կարող են կատարվել «հանգիստ» կերպով, «մտածված», առանց կրքերի ազդեցութեան և այլն, և այլն։ Այդ բոլոր առարկութիւնները ոչինչ բան են և այն էլ կեղծաւոր առարկութիւններ։ Երկաստիճան ընտրութիւնների կողմնակիցները Եւրոպայի օրինակից շատ լաւ գիտեն, որ անուղղակի ընտրութիւնները բոլորովին ժողովրդային ընտրութիւններ չեն, որ երկաստիճանի ընտրողական եղանակը զրկում է աշխատաւորներին ընտրողական իրաւունքից։ Հէնց դրա համար էլ նրանք երկաստիճան ընտրութեան ձևն են քարոզում, սակայն որպէս զի կարողանան ժողովրդին լաւ մոլորեցնել, նրանք վերոյիշեալ «անյարմարութիւնները» են մէջ բերում։

Ընդհանուր և նոյն իսկ հաւասար ընտրողական իրաւունքի մասին խօսողին բանաւորները պէտք է գեռ մի լաւ շօշափեն, թէ արդեօք ընտրութիւնների ուղղակի ձևի մասին նա ինչ է մտածում։ Եւ եթէ այդպիսի մէկը կը սկսի խէթ աչքով նայել ու խուսափողական պատասխան տալ, թէ իբր «այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է» կամ «այդ մասին յետոյ կը տեսնենք», «դա երկրորդական խնդիր է» և այլն, և այլն, դա պարզապէս լաւ իմացէք, որ դա մի խարդախ է, որի բերանը չը պէտք է մատ դնես։

ԲՕՅԿՈՏԻ ԱՌԻԹՈՎ

—

Ի՞նչ բան է բոյկոտը։

Դա կուլտուր մի առանձին եղանակ է, որը ոչ յարձակում է և ոչ էլ պաշտպանութիւն, այլ մի տեսակ մեկուսացում իր հակառակորդից։ Դա այն զրութիւնն է, երբ ճնշվածը չէ կարողանում կամ չէ ցանկանում բռնի ուժով կործել իր հարստահարողից իր պահանջներն ու իրաւունքները և որոշ ձևով վճռում է կարել իր յարաբերութիւնը նրանից։

Բոյկոտը կուլտուր խաղաղ, անուղղակի, պասիւ միջոց է, որն աւելի նման է լուռ բողոքի և ցոյց է տալիս նրա օգնութեան գիմողի ընկճված, անզօր զրութիւնը։ Մարդիկ ձեռք են առնում այդ միջոցը միայն այն ժամանակ, երբ ուղղակի, բացարձակ կուլտուր միջոցները հնարաւոր կամ յարմար չեն գտնում։

Սակայն նա յաճախ գործ է ածվում տարօրինակ և անհեթեթ ձևերով ու դրվում այնտեղ, ուր անհրաժեշտ էր գործադրել միայն ակտիւ կռիւ։ Բոյկոտը շատ անգամ մեր մէջ հասկացվում է զլխիվայր. նա մի տեսակ մօդային ընտրութիւն է կրում և ուրիշներին նմանելու անմիտ ձև ընդունում...

Վերցնենք մի աչքի ընկնող խոշոր օրինակ։

Ռուսաստանը մի քանի յեղափոխական կազմակերպութիւնները բոյկոտ են յայտարարել Պետական Դումային, համարելով այս վերջինս անբարար, անպէտք և նոյն իսկ ինքնակար հիմարկութիւն իր այս ծրագրով և այժմեան պայմաններում։

Այստեղ բնականաբար նախ այն հարցն է առաջ գալիս թէ յեղափոխական անուն կրող կազմակերպութեան սկզբունքին, ոգուն յարմար է բոյկոտը։ Նա իրաւունք ունի՞ պասիվ տակտիկայով կռուելու։

Եթէ ամեն մի յեղափոխական կազմակերպութիւն կազմում է ճնշված, գուցէ նոյն իսկ սարկացած ժողովրդական հոգու միակ անընկնելի, զոռ, ըմբոստ մասնիկը, եթէ նա իրան կոչված է համարում կուռվ կրդելու բանակ, բիւրօկրատիայից տանջվողների բանարարված իրաւունքները, եթէ նա ամպրոպաձայն իր գրոշակի վրա արիւնագոյն տառերով գրում է «Յեղափոխութիւն» խօսքը, նա մթթէ կարող է բոյկոտի տակտիկային հետևել։

«Կռիւ» նշանաբանով աշխարհ եկած ամեն մի յեղ. կազմակերպութիւն կուռվել էլ պէտք է վճռէ իր առաջ դրված խնդիրները. նա իրաւունք չունի բոյկոտ յայտարարել, որովհետև դա միևնոյն է թէ խոյս տալ ակտիւ կռիւից...

—

Սակայն ի՞նչ անել այժմեան պայմաններում, երբ բէակցիան թաւում է թէ այնպէս զօրեղացել է, որ կարող է արեան մէջ խեղդել ամեն մի յեղափոխ. շարժում, երբ այլ ևս համարեա ոչ մի յոյս չը կայ թէ զէնքի ուժով կարելի է որ և է արդիւնքի հասնել։

Այդ դէպքում էլ, կարծում ենք, չը պէտք է յուսահատվել ու բոյկոտ անել, այլ միայն փոխել կուռիւ զէնքը,—ցած դնել անյարմարը և վերցնել նպատակայարմարը։

Ո՞րն է դա։

Պէտք է նախ ասել, որ կուռի համար կարելի զանազան տեղերում գործ են դրել երեք տեսակ զէնքեր—սուր, գրիչ, խօսք։ Երեքն էլ հաւասարապէս ուժեղ են, դնահատելի, անհրաժեշտ։ Միայն այդ յեղափոխական մարմինն է լաւ կազմակերպված, որ կարող է նոյնչափ վարժ կռուել ինչպէս սրով, այնպէս էլ գրչով ու խօսքով։ Այս երեք զէնքերի դաշնակցութեամբ մղված կռիւը միայն կարող է աջողութեան աւելի մեծ յոյսեր տալ։ Եւ եթէ պայմաններն այնպէս են դասաւորվում, որ այլ ևս անհնարին է դառնում գրանցից մէկն ու մէկի գործածութիւնը, այդ դէպքում անմիջապէս պէտք է դիմել միւսների օգնութեան։

Հէնց այս վերջին զրութեան մէջ էլ այժմ գտնվում են Ռուսաստանի բոլոր յեղափոխական կազմակերպութիւնները։ Ժողովրդի ազատագրութեան գործը—այդ զորդեան հանգոյցը չը կարվեց յեղափոխական սրով, այժմ պէտք է մտածել նրան բանալու մասին... Մնում է յարձակում գործել գրչով, պաշարել հակառակորդին խօսքով...

Գրչի ասպարէզը մամուլն է, խօսքինը—Պետական Դուման։

Յեղափոխական կուսակցութիւնները չը պէտք է արհամարհեն այդ Դումայ, ինչպէս որ նրանք չեն արհամարհում մամուլը։ Նրանք չը պէտք է բոյկոտ յայտարարեն Դումային, քանի որ դա նրանց առաջ բանում է կուռի մի նոր ասպարէզ, ու պէտք է գործէ կենդանի, համարձակ խօսքը...

Բոյկոտով նրանք ոչինչ նոր բան ասած չեն լինի կառավարութեանը և ոչ էլ խանգարած Պետական Դումայ, իսկ ընդհակառակն յետ քաշելով այնտեղից կուռ անհաներին, դրանով նրանք ճանապարհ պիտի բանան դէպի այնտեղ պահպանողական, ֆեասակար տարրերի առաջ։ Դա ոչքան հեռատեսութիւն է...

Միակ ելքն է յեղափոխական կազմակերպութիւնների համար բոյկոտով չը դաւաճանել իրանց ակտիւ կուռիւնը սկզբունքին և Պետական Դումա ուղարկել իրանց լաւագոյն ներկայացուցիչներին, այնտեղ իրանց հրամայողական պահանջները դնելու և պաշտպանելու խօսքի զէնքով...

Լ. Մարկոսեան

ՊՕՂՕՂԵԱՆ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ

—

Կամենից-Պոդոլսկի ժողովրդական տան մէջ մարտի 25-ին կայացած ընտրողների նախընտրական ժողովում, գիւղացի Կանոնիկը մի ճառ է արտասանել, որը ժողովի կողմից ընդունուց հաւանութեամբ է ընդունվել, որը միևնոյն ժամանակ կարելի է համարել պոդոլեան նահանգի գիւղացիների քաղաքական ծրագիրը։

«Անհրաժեշտ է անհող և սակաւահող գիւղացիներին հողաբաժիններ տալ վանքական, եկեղեցական և արքունական հողերից ձրի։ Հողային սովին բաւարարութիւն տալու համար անհրաժեշտ է գրաւել կալուածատիրական հողերը պետական բանկի միջոցով գնելով նրանց արդար գնահատումով և ոչ թէ շուկայի գնելով։ Գիւղացիական բանկը անկարող է հող գնել գիւղացիների համար։ Մրցելով ազնուականական բանկի հետ, նա միայն բարձրացնում է հողի գները, այդ պատճառով գիւղացիական բանկը պէտք է հրաժ արվի հողաւորման գործին. իսկ նրա փոխարէն պէտք է գործէ միմիայն պետական բանկը։

Սակայն գիւղացուն հող չէ միայն հարկաւոր։ Որպէս զի վայրենիներից նա բարձր կանգնած լինի, հարկաւոր է նրան և գիտութեան, լոյս։ Անհրաժեշտ է ընդհանուր, պարտադիր, ձրի տարրական կրթութիւն թէ աղջկան և թէ իգական սեռի պատկանող երեխաների համար, իսկ դրա համար հարկաւոր է բաց անել լաւ դպրոցներ, ոչ թէ եկեղեցական-ծխական, այլ զեմստվոյական 5-ամեայ դասընթացով։

Այդ դպրոցները պէտք է շաղկապված լինեն միջնակարգ դպրոցների հետ, որոնց մէջ ուսման վարձը պէտք է պակասեցնվի այնքան, որքան որ հնարաւոր է, իսկ ամենալաւ աղքատ աշակերտներին անհրաժեշտ է ուսում տալ արքունական հաշուով։ Միմիայն այդ ձևով մենք կարող ենք ունենալ Ռուսաստանի մէջ նշանաւոր գիտական գործիչներ։ Մեզ հարկաւոր են նոյնպէս պրոֆեսիոնալ—արհեստաւորական դպրոցներ, որտեղից դուրս գային լաւ զեկավարներ գիւղական կեանքի համար։

Հարկաւոր է նոյնպէս վերացնել ազգարնակութեան մէջ զանազան տուրքեր հաւաքելու ժամանակ տեղի ունեցող անկարգութիւնները։

Մինչև այժմ հարկերի ծանրութիւնը ամբողջապէս իրանց ուսերի վրա են տանում ազգաքաները, իսկ հարուստ միլիոնատէրները նպաստներ են ստանում։ Անհրաժեշտ է ոչնչացնել ուղղակի հարկերը, անհրաժեշտ է կենսական մթերքների համար (նաւթ, լուցկի, շաքար և այլն) և մտցնել եկամտային պրոգրեսիվ հարկ. ով շատ եկամուտ ունի, թող նա շատ փող վճարէ գանձարանին։

Անհրաժեշտ է պահանջել նոյնպէս ընդարձակ զեմստվոյական ինքնավարութիւն մտցնել, ինչպէս օրինակ, շնական (վոլոստնոյ) դատական, նահանգական և շրջանային, որտեղ վճռվեն գործերը ժողովրդի ընտրականները։

Անհրաժեշտ է վերացնել վոլոստնոյ դատարանները, որոնք միմիայն ֆեսա են պատճառում ժողովրդին, և փոխարինել նրանց հաշտարար դատաւորներով երդուեալների

նական բեմը, ինչպէս մամուլն է խօսում, ազդելու կարիք ունի, որովհետև թոյլ է եւ նա այդ ուղղութիւնը մշակելով աւելի առաջ կը տանի։

Խումբը Դրէզդենից մեկնելու է Լայպցիգ, Գրազա, Վիէննա, Միւնխէն, Շտուտգարդ, Կարլսրուհէ, Գարլզ և Լօնդոն։

Արա. Տէրտէրեանց

III

Անցեալ կիրակի երեկոյեան ապրիլի 16-ին, արքունական թատրոնում հայ դերասանները խաղում էին Վ. Տէրտեանի «Վարդան Մամիկոնեան» պիէսան։ Երկրորդ կարգի պատշգամբից մի աթոռ նեռեցին դէպի «դուռանի» վերակատարը, միևնոյն ժամանակ լսվից մի բարձր բացագանչութիւն «մթթէ այդ տեսակ հայ կը լինի»։ Գարզվից, որ մի հայ երիտասարդ, թրքախօսակ, որը իր կեանքում չէր եղել ոչ մի անգամ թատրոնում, այնքան յափշտակվից դերասան պ. Աբելեանի խաղով, որ այլևս իրան զսպելու անկարող եղաւ և ոչ միանգամից վերջ տալ մի այդպիսի «դուռանանին» —սպանել։ Բարեբախտաբար, աթոռը ընկաւ առաջին դասարի շարքերում, առանց ոչ օքի ՝ասելու։ Ոտիկանութիւնը խկոյն կալանաւորեց աթոռ նեռողին և տարաւ ոստիկանատուն, որտեղ պրիսաւը հարցաքննեց ու համոզվելով նրա անմեղութեան մէջ, արձակեց։

ՀԱՐԿԵՐԻ ՄԻ ՆՈՐ ՓՈՒՆՋ

Մեր համոզմունքը, որ այս տարվայ պետական բիւջէն հաստատ հիմունքների վրա չէ դրած, ինչպէս հաւատացնում էր Ֆինանսների պ. մինիստրը իր ներկայացած ամենամսեայ օրէնքի դեկուցման մէջ, աւելի շուտ հեղինակաւոր վկայութիւն գտաւ, քան մենք սպասում էինք։ Մենք գրել էինք. «Ինչ է հիմքը այս տարվայ բիւջէի. պ. մինիստրը սպասելիք հասոյթը հաշվում է 1904 թուականի իսկական եկամուտի չափ. որ ստիճանն այդ սպասելիքը օրինաւոր է, որ են փաստերը, որով պ. մինիստրը եկել է այդ եզրակացութեան. նրանք բացակայում են։ Եւ մեզ է թողնված քննել այն հիմաքարը, որի վրա ծանրանում է հսկայ երկու միլիարդական բիւջէն։» Ապա պարզաբանելով մեր միտքը, ասել էինք. «Այո, մարդարէ չը պէտք է լինել դուշակելու որ բուդժէի գլխաւոր առանցքը՝ սպասելիք եկամուտը ուղղած թիւ է. առանցքը կէս ճանապարհին իւղվելի պէտք է կոտրվի»։ («Մշակի» № 44 Եւրոպան և ռուսական յեղափոխութիւնը)։

Մինիստրական կաբինետի բերան «Рус. Госуд.» № 35-ում մենք կարդում ենք ֆինանսների պ. մինիստրի մի երկար հաղորդագրութիւնը՝ «հարկերի պրոգրամի նախագիծ», հետևեալ նախաբանով, որ շատ հեռու է պ. մինիստրի տարեմուտի զեկուցման լաւագոյնութիւնից։ «Այն պատմական շրջանը, որի մէջ այժմս գտնվում է Ռուսաստանը ֆինանսական—տնտեսական տեսակէտից, պէտք է ընդունել ամենադժուարներից մէկը։ Հսկայական պատերազմական ծախսերը բեռնել են գանձարանը ծանր պարտաւորութիւններով, մեծացնելով նշանաւոր չափով պետական պարքը (ըստ պետական կօնտրոլի ցուցմունքի պատերազմը պարք է առեւացրել ներքին և արտաքին փոխառութիւններով, 2 միլիարդ ռուբլի մինչև 1905 թի վերջը)։ Պատերազմը նա քաշեց բազմաթիւ բանւորական ձեռքեր արդիւնաբեր աշխատանքից։ Միջին նահանգների անբերրութիւնը թուլացրեց բնակչութեան դրամական ոյժը, այն չափով, որ նրան ստիպված է կերակրել կառավարութիւնը։ Վերջապէս խուովը (смута) որ դիտմամբ ուղղած է անտեսական հիմունքները քայքայելու աւելի դժուարացնում է ժամանակակից իրերի դրութիւնը»։

Ապա պ. մինիստրը անցնում է իր պրոգրամին։ Առաջին տեղը նա տալիս է «Պետական ծախսերի կրճատման» հարցին։ Պ. մինիստրը որոշակի չէ ասում թէ որ ծախսերը և որ չափով ըստ իր կարծիքի կարելի է անվնաս հանել բիւջէից կամ կրճատել... Նա բաւականանում է ընդհանուր փրազներով, ինչպէս ըստ ինքեան այնպան բանալ—պրով, որ բոլորովին պէտք չը կայ երուզիցիայով փայլել և անհանգստացնել Սպիտանսկու ոսկրները։ «պահպանել անհրաժեշտ ծախսերը, առժամանակ յետաձգել օգտակար, բայց ոչ անհրաժեշտները, իսկ աւելորդները եռանդ գործադրելով»։ Պ. մինիստրը առաջ է բերում և կօմս Բաթանովի կարծիքը՝ «հարկաւոր է մեր բիւջէի ծախսերի բաշխակողմանի քննութիւն. անհրաժեշտ է քննել բոլոր կրեդիտները (նշանակած ծախս) հիմունքները և վերացնել նրանց, որոնց գոյութիւնը չէ արդարացնում իսկական պահանջմունքների տեսակէտից»։ Եւ խոստովանելով, որ գուցէ գտնվեն ծախսեր, որ գոյութիւն ունեն լոկ ինչպէս պատմական աւանդութիւն և որ անշնաս կարելի է ոչնչացնել, պ. մինիստրը այդ գործը թողնում է Դումային, որին խոստանում է իր վճռանձն աշխատութիւնը... Պրոգրամի այս կաղը թող ներվի մեզ ասել, մի տեսակ façon de parler է. սովորական բիւրոկրատական գոկլաղների, զեկուցումների, պրոժեկտների զարդարանք։ Պ. մինիստրին լաւ յայտնի պէտք է լինէր մեր Դումայի այսօրվայ կօմպետենցիան՝ անգօր բիւրոկրատական կանոնաւորելու գործում։ Զէ՞ որ օրէնքի համաձայն այն ծախսերը, որ կատարվում են բիւրոկրատում և առաջացել են կամ օրէնքի հիման վրա, կամ հարթագոյն հրամանով, Դուման չէնվել չէ կարող նա պէտք է օրէնսդրական ճանապարհով ձեռք բերէ նախ օրէնքի կամ բարձրագոյն հրամանի փոփոխութիւնը, ապա ծախսը վերացնել։ Մամուլում այս վերջին երկու տարիներս քիչ վրդովեցուցիչ—ծիծաղելի ծախսերը չը մատնացոյց արին, որ հեռու չեն գնացել Նիկոլայոս I-ի օրօք բացած մի ծախսից 15 հազար ռուբլի ճարպի մամ գնելու համար... հարցուխի դէմ։ Մի օր Եկատերինէ II-ը հարցուխի դէմ իբր ճար պահանջում է ճարպից մամ, որ ծախսարարին առիթ է տալիս բիւրոկրատի մի նոր երես բաց անելուն։ Եւ մի այդպիսի ծախս այժմս ոչնչացնելու համար տարիներ մինիստրական դիւաններ զբաղիչները պէտք է լինէր մեր Դումայի այսօրվայ կազմակերպիչները՝ անգօր բիւրոկրատական կանոնաւորելու գործում։ Զէ՞ որ օրէնքի համաձայն այն ծախսերը, որ կատարվում են բիւրոկրատում և առաջացել են կամ օրէնքի հիման վրա, կամ բարձրագոյն հրամանով, Դուման չէնվել չէ կարող նա պէտք է օրէնսդրական ճանապարհով ձեռք բերէ նախ օրէնքի կամ բարձրագոյն հրամանի փոփոխութիւնը, ապա ծախսը վերացնել։ Մամուլում այս վերջին երկու տարիներս քիչ վրդովեցուցիչ—ծիծաղելի ծախսերը չը մատնացոյց արին, որ հեռու չեն գնացել Նիկոլայոս I-ի օրօք բացած մի ծախսից 15 հազար ռուբլի ճարպի մամ գնելու համար... հարցուխի դէմ։ Մի օր Եկատերինէ II-ը հարցուխի դէմ իբր ճար պահանջում է ճարպից մամ, որ ծախսարարին առիթ է տալիս բիւրոկրատի մի նոր երես բաց անելուն։ Եւ մի այդպիսի ծախս այժմս ոչնչացնելու համար տարիներ մինիստրական դիւաններ զբաղիչները պէտք է ճճճացնեն, թուղթ գրեն—ինչպէս, օրէնք կազմելու, ապա նպատակին հասնեն։ Երկրորդ «տանդութիւն» գործած ծախսերը յամենայն դէպս շատ նշանաւոր չը պէտք է լինեն, բայց ինչպէս է կատարվում զորքի հսկայ 450 միլիոն ծախսարարութիւնը։

Անցեալներում պետական կօնտրոլեոր Լօրիսօն վարագոյրի մի ծայրը բացեց և հասկանալի դարձրեց և չը արաբվող ռուսերի գոյութիւնը, և հնացած կալօշներ—զրահանաւերի անվնասակարութիւնը թշնամու առաջ և այլն... Մենք ունենք վերջապէս ահագին տեղեկանական տնտեսութիւն. տասնեակ հազարաւոր վերատ երկաթուղային գծեր, մի վիթխարի տերութեան արագի մինավաճառութիւն ինչ չափով նրանց կանոնաւորացնելը կը օգներ տերունական գանձարանին։ Ինչպէս են գնում գործերը։ Մենք մի կողմ ենք թողնում մամուլի մերկացումները, ինքը պ. մինիստրը խոստովանում է, որ այստեղ не все обстоить благополучно «ֆինանսների մինիստրը չէ կարող չը յայտնել իր մտքը թէ անհրաժեշտ ցանկալի է աւելի անտեսաբար վարել գործը, քան մինչև այժմս է եղել երկաթուղիներում, մասամբ տերունական անտառներում, լեռնային հանքերում։» Եւ այսպէս կոկելով իր զեկուցումը պ. մինիստրը անցնում է աւելի շուտավոյթ, նպատակայարմար միջոցների՝ նոր հարկեր մտցնելու անհրաժեշտութեան։

Պրոգրամը նոր մտցնելիք հարկերը բաժանում է երկու հերթի. առաջին հերթի հարկերի ուսումնասիրութիւնը համապատասխան դիւանատներում վերջացած է, սպասելիք հասոյթը որոշած, մնում է հաւանութիւն ստանալ նրանց մտցնելու համար։ Երկրորդ կարգի հարկերը դեռ կարօտ են մանրակի ուսումնասիրութեան, նրանք առաջ կը քաշվեն յետոյ։ Ահա առաջին հերթի հարկերը. 1 Եկամուտային հարկ, որի ուսումնասիրութիւնը սկսվեց 1904 թուականի վերջերում, երբ պ. Ն. Կուտլերը դեռ տեսուչ էր ուղղակի հարկերի դեպարտամենտի՝ մասնակցութեամբ ռուս գիտնականների։ Պրոգրամից չէ երևում թէ որ minimum-ից սկսած պէտք է վերցնվի այդ հարկը (օրինակ, հարկը պէտք է ասն 500 ռ. աւել եկամուտ ունեցողները, որպէս զի չքաւորները չը նեղվեն) և ինչ չափով է աճելու հարկը՝ եկամուտի բարձրանալուց։ Պրոգրամը ասլիս է միայն հարկի տոկոսը 0,7—5,0 և ապասելիք արդիւնքը՝ 40,000,000 ռուբլի։ Ի նկատի ունենալով այս հարկի կարևորութիւնը և ապագայում նրա անհագին նշանակութիւնը, մենք կը տանք առանձին յօդուած, այս յօդուածը չերկարացնելու պատճառով։

II Հողային հարկը հաւաքած ճշգրիտ տեղեկութիւնների հիման վրա սակաւ է վերցնվում. նրան կարելի կը լինէր կրկնակի աւելացնել. բայց ի նկատի ունենալով կենսրոնական 9 նահանգների այս տարվայ սարբերութիւնը, պ. մինիստրը հարկը առաջարկում է միայն մնացած տեղերում աւելացնել, այն էլ հիմնվվալ հասոյթի կէս չափով. դա կը տայ գանձարանին վեց ու կէս միլիոն աւել հիմիկվանից։

III Առաջին հերթի հարկերի թւում է և քաղաքներում անշարժ կայքերի հարկի թէ րէֆորմը և թէ աւելացումը։ Ինչպէս յայտնի է այս հարկը այսպէս է կազմակերպած (խօսքս Ռուսաստանի մասին է, այլ հիմունքների վրա է գրած Լիհտատանում, այլ Կովկասում և վերջինս նման անցեալ տարվանից միայն մտցրած Թիւրքեստանում)։ Օրէնսդրական կարգով ամեն երեք տարի նահանգի ինքնակոչով կը լինի Զէ՞ որ օրէնքի համաձայն այն ծախսերը, որ կատարվում են բիւրոկրատում և առաջացել են կամ օրէնքի հիման վրա, կամ բարձրագոյն հրամանով, Դուման չէնվել չէ կարող նա պէտք է օրէնսդրական ճանապարհով ձեռք բերէ նախ օրէնքի կամ բարձրագոյն հրամանի փոփոխութիւնը, ապա ծախսը վերացնել։ Մամուլում այս վերջին երկու տարիներս քիչ վրդովեցուցիչ—ծիծաղելի ծախսերը չը մատնացոյց արին, որ հեռու չեն գնացել Նիկոլայոս I-ի օրօք բացած մի ծախսից 15 հազար ռուբլի ճարպի մամ գնելու համար... հարցուխի դէմ։ Մի օր Եկատերինէ II-ը հարցուխի դէմ իբր ճար պահանջում է ճարպից մամ, որ ծախսարարին առիթ է տալիս բիւրոկրատի մի նոր երես բաց անելուն։ Եւ մի այդպիսի ծախս այժմս ոչնչացնելու համար տարիներ մինիստրական դիւաններ զբաղիչները պէտք է ճճճացնեն, թուղթ գրեն—ինչպէս, օրէնք կազմելու, ապա նպատակին հասնեն։ Երկրորդ «տանդութիւն» գործած ծախսերը յամենայն դէպս շատ նշանաւոր չը պէտք է լինեն, բայց ինչպէս է կատարվում թողնելու, և ի լրումն սրա առանց ստիպողական միջոցների տէրութեան կողմից։ Դուք գնեցիք 1 ֆունտ թէյ և իսկի ձեր մտքով չանցաւ որ գանձարանը մտցրիք 1 ռուբլի մաքս։ Կառավարութիւնը այժմս հին անմեղութիւնը չունի, որ անգամ զգուշացնէ ձեր ոտի չափը, ինչպէս մնացել է թամբաքուի փաթեթների վրա։ Մէկ շէշ արաղ գնեցիք. չէք էլ կասկածում թէ գանձարանին որքան տուիք և որքան արժէ ինքը արաղը, որպէս ապրանք։ Մէկ պուդ կերոսին գնեցիք 1 ռ. 30—40 կոպ. որտեղից յիշէս որ 80 կօպէկը գանձարան մտաւ և այլն... Անուղղակի հարկերը մեր պետութեան բիւրժէի գրեթէ միակ աղբիւրն են, բայց վերև յիշած «առաւելութեան» պատճառով նրանց բարձրացնելը այլ ևս անհնար է՝ տեղ չէ մնացել. մնացել է երկու աղբիւր. շաքարը և թամբաքուն։ Այն պատճառաբանութիւնը, որ անում է պ. մինիստրը շաքարի նոր հարկ չաւելացնելու համար, ի նկատի ունենալով նրա՝ շաքարի օգտակարութիւնը իբրև սննդարար նիւթ և պահանջ դարձած ժողովրդի լայն խաւերի համար, ուղիղ ասած՝ մեզ վրա այն տպաւորութիւնը թողեց, ինչպէս յայտնի «խաղողը խակ է» ասածը...

V Թամբաքուի ակցիզը որոշած է բարձրացնել գոյութիւն ունեցածի գրեթէ կիսով չափ (40%)։ Դա կը տայ աւելացում 13½—14½ միլիոն ռուբլի։ Վերջապէս՝

VI-րդ առաջին հերթի հարկ է լինելու և էլեկտրական ու գազի էներգիայի վրա հարկ դնելը. թէև պ. մինիստրը գլխաւորապէս շեշտում է նրանց լուսաւորելու գերի հատկութիւնը, բայց ըստ երևոյթին և շարժողական էներգիան նոյնպէս հարկ կը տայ գուցէ նուազ չափով։ Այս հարկը հաւասար կը լինի 2—3 միլիոնի, թէև բաւականաչափ տեղեկութիւններ չեն հաւաքված։ Ուրեմն առաջին հերթ նոր մտցնվող կամ բարեփոխած հարկերը կը տան աւելացում պետական գանձարանին 66—68 միլիոն ռ., բայց պ. մինիստրը ենթադրում է մի հեշտութիւն տալ ժողովրդին՝ ազատել իրարանական հարկից (մօտ 5 միլիոն) այնպէս որ աւելացումը հաւասար կը լինի 61—63 միլիոն ռուբլու։

Երկրորդ հերթի հարկեր, այսպէս ասած պահեստի յանձնած, որ երևի շուտով մօրթլեգացիա կը կանչեն. սրանք են. 1. քաղաքից դուրս գտնվող տների (նոյնպէս խոշոր շէնօրայքում) վրա հարկ, 2. վաճառականական-արդիւնաբերական հարկի նոր աւելացումը, 3. փողի շահի 50%-ական հարկ այն դէպքերում, երբ փողը շահով է տրվում անշարժ կայքերի գրաւական վերցնելով. 4. զինուորական հարկ. այս հարկը յայտնի ժամանակամիջոցում (սովորաբար այնքան տարի որքան զինուորակոչութիւնը տևում է և տպա պահեստի ծառայութեան մեծ մասը) պէտք է տան այն անհատները, որոնք այս կամ այն պատճառով ազատվել են իսկական ծառայութիւնից՝ հարկը կը լինի պրոգրէսիվ հարուտը աւելի շատ կը բեռնվի, քան աղքատը. 5 հաստատման պօշլին (Купчая крѣпость) աւելացնելու մտադրութիւնը կայ միայն հողերը և քաղաքային գոյքերի նոր աւելի բարձր դնահատութիւնը ինք ըստ ինքեան կաւելացնի և այս աղբիւրի հասոյթը 6. նոյնպէս դրաճսլին տուրքը նորերս արդէն բարձրացրած։ մշակվում է աւելի նեղագործական միջոց հսկելու, որ տուրքից չը խուսափի ոչ մի գործողութիւն, որ օրէնքի համաձայն պարտական է հատուցանել տուրքը։ 7 և վերջապէս վերջինը այս երկար շարքում... լուսաւորութեան (իմա՞ գիտութեան) վրա հարկ՝ բոլի վրա. թուղթը սկսած փաթեթի տեսակէտից (оберточная бумага) անցած գրքի, լրագրի, գրելու, մինչև պապիրոսի թերթը հարկի կենթարկվեն, պուդը 20—30 կոպ. սկսած մինչև 1 ռ. 25 կոպ.։ Այս հարկից սպասվում է 7—8 միլիոն ռուբլի։ Պ. մինիստրը թէև ընդունում է որ հարկը ծանր չէ լինի և առաւել վերաբերում է ունևոր դասակարգին, բայց մեզ մօտ լուսաւորութիւնը դեռ խրախուսանքի է արժանի և խոստանում է այս հարկը հրապարակ հանել, երբ ուրիշ միջոց չի մնայ գանձարանին օգնելու գործում...

Մենք կրկին համոզված ենք, որ դեռ շատ «նախագիծներ» պէտք է մշակէ ֆինանսների մինիստրութեան դիւանատունը, շատ նոր հարկեր մտցնէ, առանց գործին օգնելու, մինչև Դուման չը ձեռնարկէ արմատական ռէֆորմներ։ Մենք մեր կարծիքը կը յայտնենք ուրիշ անգամ։

Պ. Զաքարեանց

Կազալինսկ

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

Մարտի 23-ին

Փառաւոր պ. Յովսէփ Ամիրխանեանը, գալով Սուրմալու գաւառը և ծանօթանալով իր կալուածքի—Աստխաբար գիւղի ժողովրդի անծայր տգիտութեան հետ, որոշեց մի քանի տարի շարունակ երեք հարիւրական ռուբլի տարեկան նուիրել նոյն գիւղում ուսումնարան բանալու համար։ Յիշեալ գումարը պ. Ամիրխանեանը խոստացաւ ամեն տարի միանուագ կամ կես կէս մասերով աւանդ տալ Իգդիրի խնայողական վարկին (գիւղականներ բացված բանկ), որտեղից իւրաքանչիւր ամիս Աստխաբարի ուսուցիչը կը ստանայ իրան որոշ հասանելիքը։ Սրանով պ. Ամիրխանեանը նաև խրախոյս է լինում մի գիւղական համեստ՝ բայց խիստ կարևոր հիմարկութեան՝ բանկին, որի նշանակութեան մասին կը խօսենք առանձին։

Յիշեալ գիւղական վարկը պ. Ամիրխանեանից ստացաւ մի այլ խրախոյս՝ գրվելով անդամ նոյն վարկին, որից շահվելու ակնկալութիւն հաւանականաբար չունենալով։ Եւ եթէ չեմ սխալվում, պ. Ամիրխանեան խոստացել է յիշեալ գիւղական բանկին փոխառութեան գումար գտնել, որով այդ օգտակար հիմարկութիւնը մանգամայն անթերի կերպով հնարաւորութիւն կունենայ նպաստաւոր լինել մի թշուառ ժողովրդի, որպէսզի է սուրմալուեցին նիւթապէս։

Ես, իբրև նոյն վարկի վարչութեան անդամ՝ իմ և իմ յարգելի ընկերների կողմից պարք եմ համարում հրապարակով խորին շնորհակալութիւն յայտնել պ. Ամիրխանեանին մեզ ցոյց տուած նիւթական աջակցութեան և բարոյական խրախոյսների համար։

Նոյնպէս հրապարակով պարք եմ համարում շնորհակալութիւն յայտնել Ալէքսանդրոպոլ քաղաքացի պ. Հայկ Ախասխալեանին՝ որ լսելով Սուրմալուում փոխ. վարկի բացվելու մասին, ուղղելով ընկերութեանը մի քաջալերիչ գրութիւն՝ գրվից անգամ յիշեալ ընկերութեան լոկ աջակցելու համար։

Ցաւով եմ, որ Իգդիրի հասարակութիւնը՝ չի մտածի օրինակ վերցնել հեռաւոր վայրերում ապրող պ. պ. Ամիրխանեանից և Ախասխալեանից, անկեղծ կերպով կը մտածի իր անծայր ցաւերի վրա, որ կուտակ կուտակ լինելով՝ մեծացել, ահռելի է դառել մօտներին ցցված՝ պատմական հսկայ անպտուղ, ինասկար Մասիս սարի նման, որի հրաբուխի նման մի օր պայթելով ջնջելու է իրանց։

Յուսկ. Հօրէնտեանեան

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

Ապրիլի 15-ին

Ապրիլի 11-ին կայացած քաղաքային խորհրդի նիստում զեկուցվից գերմանահպատակ Հենրիկոս Եանցէնի յայտարարութիւնը՝ քաղաքում ջրմուղ անկացնելու մասին։ Նախորդ նամակով հաղորդել էինք նախնական տեղեկութիւններ այս նախագծի մասին։ Աչքի առաջ ունենալով, որ այս հարցն անպէտն նշանակութիւն ունի Սղնախի համար, անհրաժեշտ ենք համարում առաջ բերել Եանցէնի առաջարկած պայմաններն ամբողջովին։ Այդ պայմանները հետևեալն են։

1) Եանցէն յանձն է առնում իր հաշվով անցկացնել Սղնախի համար ջրմուղ Կարփախի աղբիւրներից այն պայմանով, որ քաղաքը 25 տարվայ ընթացքում տայ նրան բացառական իրաւունք մատակարարել բնակիչներին ջուր ներքոյ յիշեալ վճարով։ Մենաշնորհի ժամանակը սկսվում է ջրմուղի բացելու օրից։ Այդ օրվանից քաղաքի շրջակայքում գտնվող բոլոր աղբիւրները նոյնպէս և ապագայում բացվիլները անցնում են Եանցէնի սրամադրութեան ներքոյ։

2) Եանցէնը պարտաւորվում է քաղաքային վարչութեան ցոյց տուած տեղերում շինել ջրաշէն ծորակներ (ոչ աւելի քան հինգ), որոնցից կը ծախի ջուր։ Ծանկացողների համար Եանցէնը յանձն է առնում նոյնպէս շինել տնային ճիւղերը որոշ վճարով՝ տանտէրերի հետ համաձայնութեամբ։

3) Եանցէնը պարտաւորվում է մատակարարել քաղաքի բնակիչներին ջուր հետևեալ գներով. ա) Ջրաշէն ծորակներից փողոցներում մէկ արքունական դոյլ ½ կօպ. բ) կանխավարձողներին (обоненть) տնային ճիւղերից մէկ դոյլ ⅓ կօպ. գ) քաղաքի չքաւորներին մէկ դոյլ ⅕ կօպ. դ) բոլորովին աղքատներին ձրի տրվում է ջուր՝ օրական մէկ դոյլ իւրաքանչիւրին. ե) խոշոր անասուններին ջուր խմացնելու համար փողոցային ասլատերից վերցնում է ⅕ կօպ. իւրաքանչիւր գլխից, իսկ մանր անասուններին՝ ⅒ կօպ. գլխից. զ) քաղաքային սպանդանոցի համար օրական բաց է թողնում 1000 դոյլ ջուր, իսկ եթէ աւելի հարկաւորվի՝ գոյին պէտք է վճարել ⅓ կօպ.։ Բացի սրանից, եթէ աւելորդ ջուր մնայ, քաղաքն իրաւունք ունի նրանով փողոցներ ջրել քաղաքային միջոցներով։ Զաւորներին և աղքատներին վերոյշեալ պայմաններով ջուրը բաց է թողվում այն դէպքում, եթէ նրանց կը ներկայացնեն տեղական իշխանութիւնից վկայական չքաւորեան մասին։

Ջրմուղը շինվում է հետևեալ կերպով։ Կարփախի աղբիւրներից սկսած մինչև քաղաքի կենտրոնը ջուրը պէտք է գայ 3 գիւմանոց չուգունի ասֆալտապատ խողովակներով։ Ճիւղերը քաղաքի գանազան թաղերում լինելու են նոյնպէս խողովակներից 2½, 2 և 1½ գիւյմ տրամագծով, իսկ փոքր տրամագիծ լինում են երկաթէ ցինկապատ։ Ճնշող ջրամբարը (напорный резервуаръ) և եթէ հարկաւոր լինի պահեստի ջրամբարը պէտք է շինվեն բնակից ցեմենտում լուծված։

5) Եանցէնը ծախելով օրական 5000 դոյլ ջուր ⅓ և ½ կօպ. իւրաքանչիւր դոյլ, սրանից աւելի ծախած ջրի համար վճարում է քաղաքին 50 կօպ. իւրաքանչիւր հետևեալ հարար դոյլից առաջին հինգ տարվայ ընթացքում, աւելացնելով այս վճարը իւրաքանչիւր հինգ տարուց յետոյ 10 կօպեկով։

6) Քանի հինգ տարի անցնելուց յետոյ՝ ամբողջ ջրմուղն իր բոլոր շինութիւններով դառնում է քաղաքի սեփականութիւնը ձրիաբար։ Քաղաքն իրաւունք ունի յետ գնել ջրմուղ իւրաքանչիւր 5 տարուց յետոյ. դրա համար նա պարտաւոր է մի տարի առաջ յայտնել արտօնատէրերին հինգամեայ ժամանակամիջոցը վերջացնելուց առաջ։ Եթէ քաղաքը ցանկանայ օգտվել այս իրաւունքով հինգ տարուց յետոյ՝ նա պէտք է վճարէ արտօնատէրին 40,000 ռուբլի առձեռն դրամ և մինչև մենաշնորհի ժամանակի վերջանալն՝ այսինքն 20 տարվայ ընթացքում՝ զուտ աշխատանքի 15%։ Տասը տարուց յետոյ քաղաքը վճարում է արտօնատէրին 30,000 ռուբլի և 20% զուտ աշխատանքի։ Տասնհինգ տարուց յետոյ՝ 20,000 ռուբլի և 30% զուտ աշխատանքի և 20 տարուց յետոյ քաղաքը վճարում է արտօնատէրին 10,000 ռուբլի և 40% զուտ աշխատանքի մինչև պայմանաժամանակի վերջանալը։

7) Քաղաքը տալիս է արտօնատէրերին ձրիաբար հարկաւոր տարածութեան հող՝ ջրամբարներ, ծորակներ, հսկարաններ շինելու, խողովակներ դարսելու։

8) Խողովակների դարսելուց յետոյ՝ արտօնատէրը պարտաւորվում է նրանց ժողով լցնել և այն փողոցներում, որտեղ սալայատակներ կան, վերանորոգել նախկին կերպով։

9) Ջրմուղի բանալու օրից քաղաքի շրջակայքում գտնվող բոլոր աղբիւրներից օգտվելու իրաւունքն անցնում է Եանցէնին։ Երկրորդ Ջրմուղի շինելը թոյլատրելի չէ։ Եթէ որ և է ժամանակ մարդու մօտ յայտնվի ջուր, այդ ջրով իրաւունք ունի օգտվելու միայն նա՝ տէրը, ուրիշ կողմնակի անձանց իրաւունք չը կայ տալու ոչ վճարով և ոչ ձրի։

10) Քաղաքն իրաւունք ունի հսկողութեան միայն ծախած ջրի վրա, բայց արտօնատէրի ներքին գործերի մէջ խառնվելու իրաւունք չունի։

11) Արտօնատէրն ազատվում է մենաշնորհի ամբողջ ժամանակի ընթացքում բոլոր գնվելի տուքերից քաղաքի կողմից։

12) Եանցէնին վերապահվում է իրաւունք այս նախագիծն իրականացնելու համար կազմել ընկերութիւն և նոյնպէս իր իրաւունքները տալ ուրիշին։

13) Եթէ Եանցէն պայմանագրի կապակցութեամբ մի տարվայ ընթացքում չը սկսէ աշխատանքներ, քաղաքն իրաւունք ունի հրաժարվել իր պարտաւորութիւններից և ոչնչացնել պայմանագիրը։

14) Ներկայ պայմանները պէտք է մանրամասն մշակվեն երկու կողմերից և պարտադիր չեն Եանցէնի համար մինչև իսկական պայմանագրի կապելը քաղաքի հետ։

Զարմանալիները սուտ վերաբերվեցան այս նախագծին, մի քանիսը՝ հեգնօրէն և արհամարհանքով, իսկ մէկը բացարձակ հակառակութիւն յայտնեց։ Քաղաքագլուխ Ենիկոլոփեան առոյարկեց՝ ընտրել մասնաժողով և նրան յանձնել Եանցէնի առաջարկած նախագիծը քննելու։ Այդ ընդունվեց։

Գուցէ և ծանր լինեն Եանցէնի առաջարկած մի քանի պայմաններ, բայց ընդհանրապէս նրանք օգտաւէտ են քաղաքին, որովհետև ջուրն այն ժամանակ երկու անգամ էժան կը ծախվի, քան թէ այժմ. կարող ենք ջրել փողոցներ, պարտէզներ, հրդեհի առաջ առնել, քաղաքիքներ շինել (Սղնախում բաղանիքներ չը կան) կաղաղենք ջրի նեղութիւնից, առատութեամբ կը գործադրենք, քաղաքին որոշ օգուտ կը տայ, և ապագայում կը դառնայ քաղաքի սեփականութիւնը։

Այս հարցը լուրջ է և ծանրակշիռ և եթէ մանրամասնը դրական կերպով չը լուծէ, քաղաքագլուխ Վ. Ենիկոլոփեան պարտաւոր է դիմարել քաղաքացիներին և հարցնել նրանց կարծիքը։ Բաւական է, ինչքան անցեալում տուժեցինք մեր հայրերի անխոհեմութիւններից, հակառակութիւններից, եսասիրութիւններից...

N. N.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 28-ին

Կօնսիստօրիայի անդամ Գրիգորիս քահանայ Երզնկեանցի իր վրա բարդված պարտաւորութիւնը հերքելիս, ցոյց եմ տուել, որ Ղևոնդ քահանայ Տէր-Սարգսեանը հեռացած էր Միքայանորի ուխտատեղուց իր զրաստան անհաւատարմութեան և գանազան զեղծումների համար։ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան պահանջով, և ասել էի, որ այս կասկածելի անձնաւորութիւնը Տէր-Գրիգորիսի շնորհիւ գարձեալ մտաւ այն ուխտատեղին, որտեղից արտաքսվել էր իբրև զեղծումներ գործող։ Այժմ Ղևոնդ քահանայ Տէր-Սարգսեանը «Մշակ» լրագրում հրաւիրում է ինձ հաստատել իր զրոյթիւնը, ապա թէ ոչ, իմ ճակատին դրոշմելու է սատանայի և զրպարտողի սև կնիքը։ Թէև վայել չէ ինձ քանակուռ մտնել մի այնպիսի անձնաւորութեան հետ, որը Քուլթայիսու գործակալ Տէր-Յովսէփ ուսգ քահանային ծեծելու և ուրիշ զեղծումների համար նահանգական դատարանի վճռով զրված էր բանտը և բանից դուրս գալով, ուզում էր մտաւ իր առաջին անհաւատարմութեան վայրը՝ գժբաղդ Ծիրանաւորը, սակայն բարոյական պարք եմ համարում հրապարակ հանել նրա արժանաւորութեան մի փոքրիկ նմուշը։ Ա.) Ներկայացնում եմ խմբագրութեանդ. Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան կոնսիստորիային ուղղած գրութեան վաւերական պատճէնը՝ որ գրված է 1896 թուականի դեկտեմբեր ամսի 4-ին 1034 համարով, ուր կան այն բառերը, որոնք ես գործ էի ածել իմ յօդուածի մէջ, այն է դրամական անհաւատարմութիւններ և գանազան տեսակ զեղծումներ, էլ չեմ յիշում այստեղ հերթական հոգաբարձուի պ. Ափեանցին անպատվելը ուխտի օրը արշինների յաջողակութեան պատճառով, ուխտատեղու երէցփոխ Բոյնախչանցին ծեծելը և ինքնալուսն արտաքսելը, որի համար ս. Միհոզի հրամանով ուղարկվեց Թէլէի ուխտատեղին ապատխարեալ։ Ամսթ կը հարմար այստեղ թուելու մի առ մի նրա գործութիւնները, որ կապացուցանեն Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան տնտեսական մասի կառավարիչները պպ. Սարգիս Սահակեանց և Յովսէփ Աբովեանց, Ղևոնդ ա. քահանայ Թարգանց, Յակովբ Կակեանց, Ներսիսեան դպրոցի գանձապահ Գրիգորիս քահանայ Շերմազանեանց և նոյն դպրոցի քարտուղար պ. Գարեգին Տէր-Աստուածատրեանց և Անուշաւան Աբովեանը, նաև այն հոգևորականը, որ 1892 թուականին նրա փոխարէն ոստիկանական ժամ տալ հրաւիրվից իբրև կոլերի գող և այլն։ Տէր-Ղևոնդը իրան թոյլ է տալիս վկայ հրաւիրել գերապատիւ Արխիեպիսկոպոս Սեդրակեանին, որը շրջաբերականով հրամայից, որ Թիֆլիսում ոչ մի եկեղեցի չընդունեն նրան իբրև տեղացու և անարգան գործերի համար, իսկ թէ ինչ միջոցով ձեռնադրվից և ինչպէս պատահեցին, այդ շատերին է յայտնի։ Բ) Իմ արժանաւորութեան և անարժանաւորութեան մասին թող խօսէ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան տուած վաւերական վկայականը 1897 թուականի 28 մարտի 853 համարը, որը սրա հետ ներկայացնում եմ խմբագրութեանդ և իմ ծխական Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցուն տուած օգտակարը ապացուցանող փաստաթղթեր։ Գ) Պարգևաւորութեան մասին ահա Վեհափառ Կաթողիկոսի կոնդակը տուած 30 օգոստոսի 1898 թուին 151 համարով, որով հաստատում է թէ իմ պարգևաւորութեան մասին բնաւ տեղեկութիւն չունի սրբազան Սուրէնեանց արքեպիսկոպոսը, այլ արժանացել եմ Հայրապետական պարգևին միայն նոյն հոգաբարձութեան միջնորդութեամբ իմ կատարած լուսաւոր գործերի ծառայութեան համար։ Վայելել եմ շնորհ և շատ պաշտօններ վարելով արժանացել եմ ոչ թէ միայն սրբազան Սուրէնեանցի օրով, այլև Արխատաւոր սրբազանի, որը իմ շատոր հաստատեց 1885 թուականին։ Առաջնորդական փոխանորդներ՝ Թարգենց, Աբասէ և Տիրայր վարդապետների և որ առաւելն ներկայ սրբազան առաջնորդի քաղցր հոգանաւորութիւնը, որին ապացոյց ինձ ոսկեղ նշանակելը։ Իսկ շարժական աւանդի մասին ես չեմ ցանկանում պատուական «Մշակ» թերթի էջերը զբաղեցնել մի կոտրած երկաթէ աւանդի համար, միայն կասեմ, որ աւանդը

Ապրիլի 18-ին, երեկոյեան մօտ ժամը 8-ին, գերմանական գերեզմանատից ոչ հեռու, տարբերանակի 4 հարուածով սպանվեց ազնուական Գեօրգիյ Քարթվելաշվիլին։ Զարագործը անյայտացաւ։ Քարթվելաշվիլի դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը։

—

Զիբրայէլի գաւառի Թուրքերի մէջ միաք ծագեց իրանց երեխաների համար մի դպրոց հիմնել։ Իր ազդեցութիւնով յայտնի Սալիմ-բէգ Բուստամբէկօվը ցանկութիւն յայտնեց շրջել մի քանի ազդեցիկ մարդկանց հետ մեսին Թուրք գիւղերը և ագիտացիա անել այդ մտքով։ Այդ ժաքով եռանդուն կերպով աշխատում է նաև տեղական դպրոց Ախունդ-միրզա-Ալին։ Մտադրութիւն կայ Կարաքուլախ գիւղում ուսումնարան բանալու 6 բաժանմունքով։ Ուսման առարկաների ծրագրում պէտք է մտնեն հետեւեալ լեզուները՝ Թուրքերէն, ռուսերէն, արաբերէն և պարսկերէն, Անհրաժեշտ դասագրքերը կը բերվեն Տաճկաստանից։

(Вес. Потокъ)։

—

Նախնական բանտարկութեան տան մէջ գտնվող յայտնի գրող Պէչերնովի թոքերի հիւանդութիւնը վերսկսել է։ Իր մամուլնուն ազատելու մասին ա. Պէչերնովի յարուցած միջնորդութիւնը ժանդարմերի վարչութիւնը մերժել է։ «Р. В.»

—

Խարբինից «Вечъ. Гол.»-ին հեռագրում են. ապրիլի 20-ի մօտերը զինուորական շրջանային դատարանում քննվելու է փոխ-գնդապետ Բուդուզովի գործը, որը մեղադրվում է զօրքի մէջ յեղափոխական պրոպագանդա անելու համար։ Ամբողջ պրոպագանդը վերաբերում է «Новый Край» թերթի մէջ տպագրված մի յօդուածին։ Այդ յօդուածում Բուդուզովը համոզում է զօրքին ժողովրդական յուզմունքները ճնշելու ժամանակ զէնք չը գործադրել։

—

Պետերբուրգի համալսարանի պրոֆէսսորների խորհուրդը քննութեան առաւ համալսարանի վարչութիւնը վերացնելու հարցը։ Վճռված է այս տարի յուլիսի 1-ից վերացնել։

«Р. В.»

—

Մոսկվայի քաղաքային վարչութիւնը բանուորների գրութիւնը բարելաւելու համար 50,000 ր. է յատկացրել «Աշխատանքի բօրսա» հիմնելու նպատակին։ Այդ բօրսայի միջոցով սերտ կապ է կապվում աշխատաւորի և աշխատանք տուողի մէջ։

—

Ճանապարհների հաղորդակցութեանց նախարարութիւնը 2 միլիոն է յատկացրել երկաթուղու ծառայողների կրթական գործի համար, առաջարկելով, որ իրանք ծառայողները իրանց միջից ընարեն մի յատուկ յանձնաժողով, մշակելու կրթական հիմարկութիւնների նախագիծը և գումարների բաժնումը։

—

Ռուսաստանից արտասահման գնացողների թիւը դարձեալ մեծ ծաւալ է ստացել վերջին օրերս. ամառանոցների 3/4 մասը մնում է չը վարձած, քաղաքացիները ով ուզում է դուրս գնալ—ուղևորվում է արտասահման։

—

Մոսկվայի նաւթավաճառները նաւթի համար մի ընդհանուր գին նշանակելու նպատակով ապրիլի 9-ին Ժողով են կազմակերպել։ Այդ Ժողովում մասնակցողները ցանկութիւն են յայտնել ազատվելու «Մազութ» և «Նօբելյ» ընկերութիւնների շահագործութիւնից, որոնք մենաշնորհ գործելով նաւթի ապառները՝ իրանց ուզած գներն են նշանակում, և ամիսներկան յարաբերութեան մէջ մտնել Բաքուի նաւթարդիւնագործների հետ։

—

Պետերբուրգում ապրիլի 12-ին բացվել է առևտրի և արդիւնաբերութեան ներկայացուցիչների ընդհանուր Ժողովը։ Այդ Ժողովը շաբաթուկիսով է մի քանի օր և մի շաբաթ խնդիրներ պէտք է քննութեան առնէ ապագայում առևտրի և արդիւնաբերութեան ներկայացուցիչների մշտական համաժողովներ կազմակերպելու համար։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մինչև Թիֆլիսի նահանգական վարչութեան հրամանի դուրս գալը առաջին քաղաքամասի պրիստաւի օգնական Վիսօցքայօվը տեղափոխվում է 4-դ քաղաքամասը, իսկ 4-դ քաղաքամասի պրիստաւի օգնական Բաառքօվը տեղափոխվում է 1-ին քաղաքամասի ոստիկանատում։ 5-րդ քաղաքամասի պրիստաւի օգնական Կուրշինսկին տեղափոխվում է 2-դ քաղաքամաս, իսկ պրիստաւի օգնականի ժամանակաւոր պաշտօնը Նեկիֆօրովը տեղափոխվում է 5-դ քաղաքամասի ոստիկանատուն։

—

Ապրիլի 18-ին, գիշերվայ ժամը 12-ին Դիդուբէում վիճաբանութեան ժամանակ թեթև կերպով վիրաւորվեց Անդրկովկասի երկաթուղու պահապան Գրիգոր Աբելեանը։ Նախիջևանի գաւ. Ագնաբուրդ գիւղի բնակիչ Նիկ. Գրիգորեանի ձեռքով։ Վերջինը դատի է ենթարկված։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

III

Թէհրան, ապրիլի 7-ին

Պարսից կառավարութեան քաղաքական ուղղութեան կենտրոնը ներկայումս դեռ ևս կազմում է Թուրք-պարսկական պետութիւնների միջև ծագած սահմանագլխի կոնֆլիկտը, որը մինչև այսօր ձգձգելով, հետզհետէ աւելի նուռ կերպարանք է ստանում, չը նայելով պարսից պետութեան խաղաղասիրական ջանքերին և բոլորովին մասյլում է Պարսկաստանի քաղաքական մթնոլորտը։

Ի՞նչն է կազմում իսկապէս այդ կոնֆլիկտի քանդակութիւնը և ի՞նչ հետևանք պէտք է ունենայ նա ապագայում։

Թուրքերը անցել են պարսից սահմանը և ամուր կերպով հաստատվել Հին-Լայիջանում, առարկելով որ այդ գաւառը, որտեղ դարերից ի վեր ապրում է քրդական Փիրան ցեղը, իրանց է պատկանում։ Նրանք այնտեղ մտցրել են 30,000 հոգուց բաղկացած մի զօրք, բռնի կերպով տիրել են նրա մի քանի ամրութիւններին և սպառնում են նոյն իսկ պատերազմով պատասխանելու խաղաղասէր պարսիկներին։ Պարսիկ կառավարութիւնն էլ, որ քաղաքական ներկայ պայմաններում իր երկրի համար բոլորովին անպատաս է համարում կու տէրութիւնների սահմաններում բնակվում են մօտ 40,000 Լօռի և Բախտիարի ցիա քաջ քրդեր, որոնք Պարսից Շահն-շահի հրամանով հպատակներն են և մի քանի օրվայ ընթացքում կարող են նուաճել մահմեդականների սրբազան քաղաք Քերբելան, եթէ մի հրաման արձակէ պարսից կառավարութիւնը։ Իսկ այդ հանդամանքից օգուտ կը քաղեն նաև Բասրայի շրջանում ապրող արաբները և իրանցից կը թօթափեն թուրքական անտանելի լուծը և «Կարմիր գազանի» խալիֆայական հեղինակութիւնը։

Անգլիան էլ այդ բանին սիրով ակնատես կը լինի, կարծելով որ դրանից յետոյ հեշտութեամբ իր հովանաւորութեան տակ կառնի նաև Բասրայի շէյխին և այդտեղ ապրող անգլիացի վաճառականների պաշտպանութեան համար զօրք կուղարկէ։ Իսկ այդ բոլոր բարդութիւններից խուսափելու համար եւրոպական մեծ պետութիւնների վրա բարոյական պարտականութիւն է դրված նախօրօք թուրքիայի ոտնձգութեան առաջը խաղաղ ճանապարհով առնելու։

Լ. Բաբայեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՐԻՒԵՐ

—

Ա Ն Գ Լ Ի Ա

Սօցիալ - դեմոկրատական դասակցութեան ընդհանուր ժողովը։ Ապրիլի 14-ին և 15-ին Բրեմֆօրդում կայացած այդ ժողովում քննվեցին Մեծ-Բրիտանիայի ընթացիկ ներքին քաղաքականութեան մի քանի հարցերը։ Ժողովը կայացրեց որոշումն զղրոցական նոր օրինագծի առիթով և դատապարտեց այդ օրինագիծը, կրկնելով այն պահանջը, որ Դաշնակցութիւնը արել էր մի քանի տարի առաջ, այն է—պետութիւնը պէտք է ազատվի իւրաքանչիւրին ձրի ուսումն տուողին ասիճաններից մինչև բարձրը, պետութիւնը պէտք է պահէ իր հաշիվ բոլոր երեխաներին զղրոցական ուսման ամբողջ շրջանում. ուսումը պէտք է բացառապէս աշխարհիկ լինի, կրօնի ուսումը, թեկուզ նոյն իսկ դաւանական բնաւորութիւն չունեցող, պէտք է փոխարինվի բարոյականութեան ուսմամբ։

Նոյն ժողովում Հայոց դատն մի զեկուցումն կարդաց միլիտարիզմի մասին, որի մէջ այն միաքն յայտնեց, թէ ժամանակիս պատերազմները մեծ մասամբ մղվում են կապիտալիզմի օգտին, բայց կան պատերազմներ, որոնք բարերար են ժողովրդի համար—օրինակ, ազատագրական կռիվները։ Եթէ հնդիկները, սասցները, ապաստամբեն բրիտանական տիրապետութեան դէմ, անգլիական սոցիալիստները կարող էին միայն ողջունել նրանց և ամեն ջանք գործ դնել, որ Մեծն-Բրիտանիան զրկվի հնարաւորութիւնից ուղարկել զօրք Հնդկաստան։ Հանդիսանալով պատերազմի վճռական հակառակորդներ, սոցիալիստները չեն կարող մի և նոյն ժամանակ չը խոստովանվել, որ ժամանակիս պայմաններում երկիրը պէտք է պատրաստ լինի յետ մղելու թշնամուն օտարերկրեայ արշաւանքի դէպքում. այդ նպատակով, երկաթուղիները պէտք է զինվարժութեան մէջ մտցվեն։

Ապա ժողովը, քննելով բանուորական բոլոր ֆրակցիաները միացնելու հարցը եկաւ այն եզրակացութեան, որ այդ միութիւնը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ միաս ֆրակցիաները աւելի որոշակի ցոյց կը տան իրանց սոցիալիստական բնաւորութիւնը։

Դպրոցական նոր օրինագիծը։ Կառավարութիւնը մտցրեց պարլամենտի քննութեան զղրոցական նոր օրինագիծ, որ շատ խորը մի քայլ է ներկայացնում ժողովրդական դպրոցը եկեղեցու ազդեցութիւնից ազատելու գործի մէջ, թէև դարձեալ կօմպրօմիս է կազմում և կրօնութեան ամբողջ գործը աշխարհականացնելուց հեռու է։ Եւ դա շատ հասկանալի է։ Կառավարութիւնը ի նկատի ունի Մեծ-Բրիտանիայի ազգաբնակութեան մեծամասնութեան տրամադրութիւնը, որ յօգուտ լիակատար աշխարհականացման չէ, ուստի և նոր օրինագիծը բոլորովին չէ հանում կրօնի ուսումը զղրոցից, այլ սահմանափակում է միայն Աստուածաշնչով, զրկելով նրան բոլորովին դաւանաբանական բնաւորութիւնից։ Բացի դրանից՝ մասնաւոր զղրոցների համար թոյլատրվում է և դաւանական կրօնի ուսումը, բայց միայն այն պայմանով, եթէ աշակերտների ծնողների 3/4 մասը ցանկանայ մտցնել այդ ուսումը։

Այդ օրինագիծը յարձակման ենթարկվեց երկու կողմից—սոցիալիստների և կղերականների։ Առաջինները պահանջում են փոխարինել Աստուածաշնչի դասաւանդութիւնը բարոյականութեան հիմնական ճշմարտութիւնների դասաւանդութեամբ. երկրորդները բողոքում են կրօնի դասաւանդութեան սահմանափակման դէմ։

Տեսնենք ի՞նչ որոշումներ կը կայացնէ պարլամենտը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

18 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 ապրիլի։ Դեռ յունվարի 22-ին, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը յանձնարարել էր երկաթուղային վարչութիւններին—քննել առանձին մասնաժողովներում երկաթուղային գործադուլներին մասնակցելու պատճառով արտաքսած անձից միջնորդութիւնը և նրանց կրկին վերընդունելու հարցը։ Այժմ պարզվում է, որ այդ մասնաժողովները արդէն վերջացրել են իրանց պարապմունքները, ծառայողների մեծ մասը վերընդունված է արդէն, բայց և այնպէս ընդունելութիւնը շարունակվում է։—Երզուեալ հաւատարմատար Մարգօլինը Նովօրօսիյսկի համալսարանի ուսանողներից մէկից ստացել է մի նամակ, որի մէջ ուսանողը դրականապէս պնդում է, որ Գապօնը կենդանի է։ Մի քանի պատճառներից դրդված, նա անյարմար է գտնում բանալ Գապօնի ձուր լինելը, բայց մօտ օրերս նա կուղարկէ այդ գործի առիթով եղած մի քանի հետաքրքիր արձանագրութիւնները։ Գապօնի բանտարկեալ կազմակերպութեան կոմիտէը, ինչպէս լսվում է, որոշ է պահանջ յայտնել այն 20,000 ռուբլու համար, որ ներկայումս պահվում է Լիօնի բանկում։

ՊԱՐԻԶ, 17 ապրիլի։ Ինչպէս այժմ հաւատիացնում են ամենարժանահաւատ աղբիւրից, որ այն պատգամաւորութիւնը որ եկել էր ռուսաց փոխարութեան հակառակ ագիտացիա մղելու և որի համար նա ներկայացել էր Ֆալիէրին և Կլեմանսօին,—բաղկացած է եղել կոմս Նեսսելրոդից, երզուեալ—հաւատարմատար Վասիլից Ալէքսէեվիչ Մակմակովից և իշխան Դոլգօրուկովից, որի անունը և հօր անունը դեռ ևս պարզված չէ։

ՎԱՐՇԱՎԱ, 17 ապրիլի։ Ապրիլի 18-ին, առաւօտեան լրագրները լոյս չեն տեսնի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 ապրիլի։ «Торг. Пром. Газ.» տպված է մի կոչ, որ ուղղված է Պետական Դումայի համար ընտրված գիւղացիներին. «ընկերներ, մենք չէնք ճանաչում միմիանց, մենք չէնք տեսել միմիանց, բայց մեր գործը մի է. մենք պէտք է շրջենք, ծանօթանանք, խօսենք, պէտք է մշակենք աշխատանքի մի ընդհանուր ծրագիր. առաջարկում ենք ժողովվել Պետերբուրգում, ապրիլի 19-ի մօտերը։ Այդ օրվանից յոյս ունենք դիմել խորհրդակցութեան» Ստորագրել են Պետական Դումայի գիւղացի անդամները։

ՎԻՏԵԲՍԿ, 17 ապրիլի։ Կար ու ձեի բոլոր արհեստանոցներում մտցրված է 9 ժամվայ բանուորական օր—առաւօտեան ժամի 8-ից մինչև երեկոյեան ժամի 7-ը—2 ժամվայ ընդմիջումով։—Ահա երկրորդ շաբաթն է, որ գուլպայ գործողները գործադուլ են անում, պահանջելով կատարած իրի վարձը աւելացնել։

ԲԵՐԼԻՆ, 17 ապրիլի։ «Նօրդ. Ալգ.» լրագրի ասելով, կառավարութիւնը յուլիսի 28-ին միջազգային մի խորհրդակցութիւն է գումարելու՝ անթել հեռագրութեան հարցը քննելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 ապրիլի։ Ապրիլի 14-ին կայացած Պետական խորհրդի վերջին նիստում նախկին կազմով քննվել է 38 գործ, որոնցից բաւարար լուծումն են ստացել մի քանիսները, օր Սախալին կղզին չաքսորելու, ցամաքային և նաւատորմային ծառայութիւնների ժամանակամիջոցը կրճատելու առիթով արդէն կազմած վաւերացնող գործերը, ինչպէս և այն վճիռը, որ այս տարի ծառայութեան են կոչվելու 469,418 նորակոչներ։ Նիստը փակելուց առաջ կոմս Սօլսկին Կայսրի անունից շնորհակալութիւն յայտնեց խորհրդի անդամներին նրանց հայրենիքի օգտին մատուցած անձնուրաց ծառայութեան և աշխատանքի համար։ Որոշվեց մի հեռագիր ուղղել Կայսրի անունով, յայտնելով իրանց ամենահպատակ զգացմունքների առհաւատչեան և իրանց պատրաստակամութիւնը նոյնակերպ աշխատել Խորհրդի ընտրեալ մասի հետ միահամուռ կերպով։ Ապա Սօլսկին իր կողմից շնորհակալութիւն յայտնեց բոլորին իրանց ընկերակցութեան համար և յոյս յայտնեց, որ նրանք կը շարունակեն իրանց աշխատանքը ընտրեալ անդամների հետ սահմանակվելիք կուսակցութեան երրորդ համագումարում։ Ապրիլի 21-ին քննութեան են ենթարկվելու կուսակցութեան պարլամենտական խմբակների և նրա կենտրոնական մարմինների յարաբերութիւնը, կուսակցութեան անդամների Դումայում ունենալիք տակտիկան, կուսակցութեան յանկոյս պարլամենտական ապագայ գործունէութիւնը, ապագայ համաժողովներում ունենալիք տեղական խմբերի ներկայացուցչութեան հարակերպութիւնը, ընտրողական օրէնքի և ընտրողական վիճակների բաժանման նախագիծը, ագրարային հարցը, կուսակցութիւնը, օրինական դարձնելու կենտրոնական կոմիտէի գործողութիւնը և կուսակցութեան ֆինանսական հարցը։ Բացի որոշած տեղական խմբերի պատգամաւորների թիւից համագումարին հրաւիրվելու են վճռող ձայնով կուսակցութեան պատկանող բոլոր անդամները։

ՊՈՒԲՐԻԶ, 18 ապրիլի։ Ամբողջ ամսագիր մամբերան խօսում է կոմս Վիտտէի հրաժարականի մասին, որը իբր ընդունվել է Կայսրից։

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 18 ապրիլի։ Լուրերի համաձայն ընտրութիւնները տուել են այսպիսի հետևանք. 289 վիճակներում ընտրվել են Կօշուտի կուսակցութիւնից 182 անդամ, 52 հոգի—սոցիալ-դեմոկրատների կուսակցութիւնից, 18 հոգի ազգային կուսակցութիւնից, մնացածները ազգայիններ—սոցիալիստներ են ուրիշ թեկնածուներն պատկանող։

ՐԻԳԱ, 18 ապրիլի։ Պետական Խորհրդի անդամ զէմստվոյի կողմից ընտրված է բալտիական սահմանադրական կուսակցութեան անդամ բարոն Տիզենհաուզէնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 ապրիլի։ Ներկայումս ներքին գործերի մինիստրութիւնը շաղով մշակում է ոստիկանական պահնորդութեան արմատական բեֆորմների մի նախագիծ։ Երկու պաշտօնեաներ շինական ժանդարմերիան ուսումնասիրելու նպատակով մեկնել են Ֆրանսիա և Գերմանիա։ Բանուոր պատգամաւորների խորհրդի գործի առիթով կատարվող քննութիւնը վերջացել է արդէն և յանձնվելու է դատաստանական պալատին։ Պատասխանատուութեան են ենթարկվում 150 հոգի։ Անցեալ գործադուլների ժամանակ արձակված երկաթուղային և պոստ-հեռագրական պաշտօնեաների ծառայութեան վերընդունելութիւնը պաշտօնապէս թոյլատրված է։—Մօտերս բոլորովին կարգելվի հասարակութեան յանախել Տաւրիկեան պալատը։ Խիստ կանոններ են տրվելու պալատի պաշտպանութեան համար։ Այսօր երդուեալ հաւատարմատար Մարգօլինը ստացել է Բերլինից մի նամակ 1300 ռուբլի ընկալաթղթով, որ խոստացված էր առաջին նամակի մէջ։ Դանվել է միայն մի դատարկ քսակ։ Մարգօլինը հաւատացած է, որ Գապօնը սպանվել է յեղափոխականների ձեռքով։ Պետերբուրգի հեռագրական գործակալութիւնը վերջացրեց պարլամենտական գործունէութեան մասին տեղեկութիւններ հաղորդելու կազմակերպութիւնը և Պետական Դումային կից հիմնել է պաշտօնական բաժին, որ գտնվում է Տաւրիկեան պալատի մի առանձին դահլիճում. այդպիսով մեր գործակալութիւնը միայն հնարաւորութիւն ստացաւ ապրիլի 27-ին իւրաքանչիւր երկու ժամից յետոյ մանրամասն հաշիւ տալ հասարակութեան, ժողովների ելքի մասին։ Այդ հաշիւները պէտք է ներկայացվեն Պետական Դումային՝ ի տեղեկութիւն Դումայի անդամների, ինչպէս և յանձնվելու է մամուլի ներկայացուցչներին. բացի դրանից դրանք լինելու են մշտապէս Դումայի և մամուլի հսկողութեան ներքոյ։ Պետերբուրգի և դաւառական լրագիրներին բիւրեղներ կուղարկեն լոյս տեսածների չափով. ի միջի այլոց մեր գործակալութիւնը հեռատիպ մեքենայով ըստ չափու զարգացման կուղարկէ բաժանորդներին պարլամենտական վիճաբանութիւնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 ապրիլի։ Պետական Դումայի անդամ, համառուսական գիւղացիական ներկայացուցչութիւնների միացման ձեռնարկող գիւղացի Ալադինը ասել է մի թղթակցի հետևեալը. «Այդ կազմակերպութիւնը աւելի ձախակողմեան է, քան սոց.-դեմոկրատական կուսակցութիւնը, որի հետ ձեռք ձեռքի տուած առաջ կընթանայ, եթէ կադետների տակտիկան կը կապի նրանց անմիջապէս ժողովրդի հետ։ Գիւղացիական կուսակցութեան կողմը ներկայումս կանգնած են Դումային սրբութեամբ հաւատոց միլիոնաւոր մարդիկ»։ Մայրաքաղաքի լրագիրներից մէկի խմբագրութիւնը ստացել է բեմինգտօնի վրա տպված մի նամակ, որի տակ ստորագրված է բանուորական դատարանի անդամներից մէկի անունը, որի մէջ ասվում է, որ Գապօնին սպանել են դաւաճանութեան և մատնութեան համար. եղեռնագործութեան տեղը չէ յիշված, բայց հաւանօրէն այդ բանը պատահել է Ֆինլանդիայում։ Նամակում ասված է, որ Գապօնին բանել են յանցանքի տեղում, և հանդիպել են նրա կողմից յուսահատ ընդդիմադրութեան։ Բացի դրանից նամակագիրը խոստանում է գրել Գապօնի վերջին ժամերի մանրամասնութիւնները։

ՄՕՍԿՎԱ, 18 ապրիլի։ Պրէսնում ձերբակալված են 14 յեղափոխականներ։—Կոմս Վիտտէի հրաժարականի լուրը բորսայում շատ վատ տպաւորութիւն է թողել թէև չեն հաւատացել։ Թղթերի գինը ընկել է։

ԶԻՏԱ, 18 ապրիլի։ Ձերբակալված են ոստիկանապետ Պրօշունսկին և 2 վաճառականներ։

ՊԱՐԻԶ 18 ապրիլի։ Տպարանային լրանուրները ութ ժամեայ բանուորական օրի առիթով աշխատեցին ցոյց տարքել։ ոստիկանութիւնը ցրեց ամբոխը, Աշխատանքի Բորսայի շինութեան մօտ շատերին ձերբակալեց։ Ամենուրեք գործա- Թղթերը ցոյցեր են կազմակերպում, իսկ ոստիկանութիւնը ցրում է. քաղաքի զանազան մասերում շրջում են հեծեալ և հետևակ պահակախմբեր։

ԲԵՐԼԻՆ, 18 ապրիլի։ Կոմս Վիտտէի հրաժարական լուրերի ազդեցութեան տակ Բորսայում այսօր գործառնութիւնը թոյլ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Ե ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից՝ ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մեղսուռ. հ.
Ե. Մ. ԶԻՏՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԽԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
. Ի. Գ ԿԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳԻՆ-ԲԺՇԿ Ա. Ի. ՇԱՏԻՐԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԴՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահան.։
Ռ. .Գ ԱՐՆԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Վճարը 50 կ. դաւորները ձրի։ Համախոհներդ (կոնսուլտ) և օգնականի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ նոր գիրք

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի։ Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10%—յատկացրված է հայ արկածեալների օգտին։ Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասիվիչի փողոց, № 13։

(հ. կ. ե.) 1—28

ՀՐԱՒԷՐ

Թէմիս բարձր սրբազան առաջնորդի կարգադրութեամբ, առաջակայ կիրակի, մարտս 23-ին, առաւօտեան 10 ժամին Ս. պատարագից յետոյ, կայանալու է երկու պատգամաւորների ընտրութիւն, որոնք իրանց միջից ընտրելու են 12 հոգաբարձու Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի համար։ Ուստի խնդրեմ շնորհ բերել որոշած ժամին ներկայ գտնվելու 2-րդ և վերջին ընտրութեան իբրև ծխական։

Ս. Մարգիս եկեղ.՝ Կոստ. ք Արարատանց
(հ.շ.կ.) 1—3

Բ Ա Ի Շ Կ

Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն մնկիլեան Գօլօվինսկի պրոսպեկտի և Կարեռսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կարեռսկի փողոցից № 2.

(ա. օ.) 130—300

Բ Ա Շ Կ Ա Պ Ե Տ

Մ. Գ. ՋԱԽԱՐԻԳԵԱՆ

Ներքին եւ նեարվային հիւանդութիւնների

Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լերմոնտովսկայա փողոց, տուն № 16։

(ա. օ.) 17—50

ԲԱՅՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Օսլօլակ, անկիւն Բերուսովսկի և Պասկևիչա փող. № 33/15 ա. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։

(ա. օ.) 71—100

ԲԱՅՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի

Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքաբանական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բոլշոյսկայա փող. № 1. «Պօժարնի կօմանդի» դիմացը. տելեֆոն № 11։

(ա. օ.) 19—20

Լոյս է տեսել և վաճառվում է Թիֆլիսի, Գանձակի և Բաքուի գրավաճառանոցներում

„ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

Ազգային լիակատար երգարանը 5-րդ տարեգրութեամբ, նոր երգերով եւ բանաստեղծութիւններով, բաղկացած 374 մեծագիր երեսներից։ Գինն է 1 ր., ճանապարհածախսով—1 ր. 20 կ.։ Օտարաքաղաքացի ցանկացողները, յայտնելով իրանց հիշդ հասցէն, դիմում են Բաքու, «Սոխակի» հրատարակչին, հեռեակայ հասցէով. Протоіерею Григорію Григорянцъ. Баку.

Այս օրերս լոյս կը տեսնի «Богъ въ Природѣ» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը։

(պ.) 6—6

Բ Ա Շ Կ Ա Պ Ե Տ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱԶԳՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինսկայա փողոց № 8։ (հ.ո.)57—100

Ս. Գ. Շերմազանեան

Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգենովի № 7. պրոֆեսոր Նոսար Մղերբովի։ (հ.հ.շ.) 4—100

ԿԵՑԻՐ

Բժիշկներ Սօկոլսկի, Գոտերստունի, Շմիտի, Բիլի և ուրիշ հետազօտութիւնից երեում է, որ կեցիրը չափազանց նպաստում է կշռի աւելանալուն. կեցիրը գործ է ածվում թոքերի հիւանդութեան, ազիքների կատարի, արեան պակասութեան, ջրջրուկի, (золотуха) դալկահարութեան, ուժասպառութեան ժամանակ և առհասարակ լաւ ներգործութիւն է ունենում ջղերը հանգստացնելու վրա։ Կարելի է ձեռք բերել Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մելիքեանի փող. սեմինարիայի դիմաց։ Ցանկացողներին կարելի է ուղարկել իրանց բնակարանը։

(հ.կ.) 18—20

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Գօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բաքուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցերը.	11 ժ. 03 ր. ցերը.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ
Թիֆլիսից դուրս գալը	12 » 23 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցերը.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցերը.	10 ժ. 40 ր. գիշ
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցերը.	11 ժ. 38 ր. գիշ
Բաքու հասնելը	1 » 20 ր. ցերը.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցերը
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 11 ր. գիշ
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ... եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցերը.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր ցերը
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցերը
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ
Երևան հասնելը	1 » 55 » ցերը.	—	—	6 ժ. 10 ր գիշ
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ,

Մուշտայիդ այգում, վաճառվում է ՇԵՐԱՄԻ ԸՆՏԻՐ ՍԵՐՄ դեղին և սպիտակ տեսակի, մախալը 40 կօպ.

Թեմնիներ, այգեպահական և շերամապահական գործիքներ

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ՀԱՒԱՔԱԾՈՒՆԵՐ,

Մեղուապահական գործիքներ,

ԴԱԴ